

ՌԴ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ Է ՄՏԱՅԵԼ 10000-ԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ



Հարցազրույց տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆԻ հետ

- Ըստ ձեր ունեցած տեղեկատվության, այսօր 37 քաղաքացիներից մոտավորապես քանի՞սն են Ռուսաստանում աշխատում:

- Մենք մոտավոր պատկերացում ունենք այն սեգրմային արտագնա աշխատողների թվաքանակի վերաբերյալ, ովքեր Ռուսաստանում են աշխատում: Նրանց քանակը տարեկան մինչև 60000-ի շրջանակում է: Խոսքը այն մարդկանց մասին է, ովքեր վաղ գարնանը մեկնում և ուշ աշնանը վերադառնում են:

Ի դեպ, այս առումով Խորհրդային Միության ժամանակ եղած ծավալները շարունակում են պահպանվել: Փաստն այն է, որ այն ժամանակ «խոսք» անվան տակ 40-60 հազար մարդ էր գնում Հայաստանից, և այս տարիներին էլ սեգրմային արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակը նույնն է: Բայց դա առանձին խոսակցության նյութ է, դրա պատճառները պարզելը երկի առանձին վերլուծության խնդիր:

- Ձեր պատասխանը վերաբերում է մեկ տարով արտագնա աշխատանքի մեկնողներին, իսկ ի՞նչ տվյալներ ունեք Ռուսաստանում երկարատև աշխատանքային գործունեություն իրականացնող 37 քաղաքացիների վերաբերյալ:

- Նրանց թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ չունենք, և դժվար էլ է այդ տեղեկություններն ունենալ: Ինչո՞ւ: Որովհետև մեկ տարուց ավելի տարբեր ժամանակային տևողություններ կան, ասենք 3 տարի, 5 տարի: Հինգ տարվա պարազայում կարելի է ենթադրել, որ մեծ մասն արդեն ձեռք է բերել ՌԴ քաղաքացու կարգավիճակ: Այսինքն Հայաստանի Հանրապետության կողմից պաշտպանության ենթակա սուբյեկտների շարքից տեղափոխվել են մեկ այլ երկրի պաշտպանության կամ, այսպես ասած, հովանու տակ, քաղաքացիությունը դա է ենթադրում:

- Նկատի ունեք այն անձանց, ովքեր Հայաստանի քաղաքացիությունից դուրս չեն եկել կամ չեն հրաժարվել և, դրանով հանդերձ, արդեն մի քանի տարի է, ինչ Ռուսաստանում են ապրում և աշխատում:

- Այդ իրողությունը զանգվածային դրսևորում ունի: Սահմանադրության մեջ ունեինք համապատասխան արգելող նորմ, որը մի ստվար մասի կարծես թե դրոշմ, որ հայտնվեն օրենքին հակասող վիճակում, այն է ձեռք բերեն ՌԴ քաղաքացիություն, դուրս չգալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից: Խոսքը տասնյակ հազարների մասին է, եթե ոչ ավելի մեծաքանակ անձանց: Դժվար է պատկերացնել, որ մարդը, տասը և ավելի տարիներ Ռուսաստանում աշխատելով կամ ընդհանրապես, բնակվելով՝ չունենա այդ երկրի քաղաքացիություն: Ցանկացած երկրում էլ 10 տարի մշտական բնակությունն այն ամենաբարձր ժամանակային ցեղան է, որ երկրները դնում են օտարերկրացիների առջև այլ պարամետրերի թվում քաղաքացիություն ձեռք բերելու ճանապարհին: Իսկ ՌԴ-ում, որքան տեղյակ են, ոչ թե 10, այլ 5 տարի է այդ ժամկետը:

Իմ գնահատմամբ, ՌԴ քաղաքացիություն ստացած Հայաստանի քաղաքացիների թիվը 100 հազարից անցնում է: Նկատի ունենանք, որ այս տարիների ընթացքում արտագաղթած անձանց թվաքանակը գնահատվում է մինչև 1 միլիոն, որի մինչև 60-65 տոկոսը բաժին է ընկնում Ռուսաստանին: Այսինքն՝ խոսքը մոտ 650 հազար հոգու, ընդ որում, ոչ թե ժամանակավոր, սեգրմային աշխատանքային գործունեության մեկնածուների, այլ այնտեղ մշտապես գտնվողների մասին է:

Նրանց հոսքը հիմնականում բաժին ընկավ 1992-2001 թվականներին, հատկապես 1993-96 թվականներին: Այսինքն՝ ՌԴ մեկնած մեր այդ քաղաքացիների մեծ մասը 10 և ավելի տարիներ այնտեղ է բնակվում: Եթե այդ մարդկանցից 3-ից 1-ը, որը, կարծում են, շատ մեղմ ենթադրություն է, ՌԴ քաղաքացիություն է ձեռք բերել, ապա խոսքը արդեն 100 հազարից ավելի մարդկանց մասին է:

- Կարո՞ղ ենք ենթադրել, որ ՌԴ-ում երկար ժամանակ գտնվող մեր հայրենակիցները Հայաստանի քաղաքացիությունից թեկուզ օրենսդրության խախտման գնով դուրս չգալով, մտածում են, որ Հայաստանը երբևէ բարեկեցիկ երկիր կդառնա, ու իրենք կվե-

րադառնան:

- Ճիշտ հետևություն էք կատարում: Վստահ եմ, որ եթե սահմանի վրա մեկնողների շրջանում հարցում կատարվի, թե նրանք արդյոք մշտական բնակության նպատակով են գնում, 90 տոկոսը, եթե ոչ 95 տոկոսը, կպատասխանի ոչ: Կասի, որ ժամանակավոր է մեկնում, տնտեսական վիճակը մի քիչ շտկելու նպատակով: Սակայն տարիների ընթացքում Հայաստանի հետ այդ մարդկանց կամ նրանց մի մասի կապերն աստիճանաբար թուլանում են, չնայած շատերն այնտեղ մշտապես բնակվելու հեռանկարի հետ հոգեբանորեն չեն հաշտվում:

Այնուհանդերձ, երբ երեխաների դպրոց ընդունվելու հարց է առաջ գալիս, դպրոց են հաճախում, խնդիրներ են արդեն առաջանում դպրոցից հետո այստեղ տեղափոխվել և այլև, և այլև, մեր մեկնած հայրենակիցներն այլ վճիռ են կայացնում: Այսինքն գործընթացը սկսվում է աշխատանքային միգրացիայի տեսքով, բայց, որպես կանոն, ավարտվում է մշտական էմիգրանտի կարգավիճակով:

Եթե հարազատ մնայինք մեր նախկին, դեռ չփոփոխված սահմանադրության տառին ու ոգուն, տրամաբանությանը, ապա անցած տարիների ընթացքում պարտավոր էինք օրենք ընդունել և դրանով միակողմանիորեն հռչակել, որ այն անձինք, ովքեր դարձել են այլ երկրի քաղաքացի առանց Հայաստանի քաղաքացիությունից դուրս գալու, կորցրել են մեր երկրի քաղաքացիությունը:

Բարեբախտաբար նման քայլեր չեն արվել (չնայած առաջարկներ, խոսակցություններ եղել են), որովհետև դրանով մեր պետությունն իր հետ այդ անձանց կապող կամուրջը այրելու դերն իր վրա կվերցներ: Անկախ նրանից՝ այդ մարդիկ Հայաստանի անձնագիրն օգտագործում են, թե՛ ոչ, դրա ունենալը կամ մեր երկրի քաղաքացիությունից զրկված չլինելը, հոգեբանական առումով կապող հանգամանք է հանդիսանում:

ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

- Ռուսաստանը վերջերս փոխել է իր վերաբերմունքը աշխատանքային միգրանտների նկատմամբ: Եթե չեն սխալվում, հիմա այնտեղ աշխատանքի թույլտվության պարզեցված կարգ է գործում, միաժամանակ կտրուկ խստացվել է նման թույլտվություն չունեցողների պատասխանատվությունը: Այս առումով մեր երկրի շատ քաղաքացիների հետաքրքրում է, թե ՌԴ արտագնա աշխատանքի մեկնողներն առաջինը ի՞նչ գործողություն պետք է կատարեն, որպեսզի իրենց կարգավիճակն այնտեղ օրինական լինի:

- Իրոք, պարզեցրել, շատ են պարզեցրել այդ գործընթացը: Նախկինում աշխատանքի թույլտվություն ստանալու գործընթացը տևում էր 6-8 ամիս այն դեպքում, երբ մինչև 12 ամսով թույլտվություն պետք է տային և այնուհետև կրկին նորացվեր՝ այդ ժամկետը լրանալուց հետո: Դրա համար գրեթե ոչ մեկն էլ այդ թույլտվությունը ձեռք չէր բերում:

Սակայն, ինչպես նշեցի, այդ գործընթացն այժմ պարզեցվել է: Քաղաքացին պետք է դիմի դաշնային միգրացիոն ծառայության տարածքային ստորաբաժանում: Ծառայություն պետք է ներկայացնել անձնագիր, միգրացիոն քարտ՝ սահմանափակի նշումով, որ մտել է Ռուսաստանի Դաշնություն (քարտը լրացման է տրվում ինքնաթիռում), սահմանված ձևի դիմում, որը, բնականաբար, այնտեղ կա, ինչպես նաև պետական տուրքի վճարման անդորրագիր: Պետական տուրքի չափը փոփոխությունների է ենթարկվել, բայց կարող են ենթադրել, որ 1000 ռուսական ռուբլուց ավելի չէ:

- Աշխատանքային գրքույկ պահանջվո՞ւմ է:

- Ոչ: Չեն պահանջվում նաև ենթադրյալ գործատուի թույլտվությունը կամ համաձայնությունը, այլ փաստաթղթեր: Անհրաժեշտ է ներկայացնել միայն վերը նշված 4 փաստաթուղթ:

- ՌԴ-ում լինելուց սկսած, դիմելու որևէ ժամանակային սահմանափակում կա՞:

- Այդպիսի սահմանափակում չկա, բայց նախընտրելի է, ժամանակ չափելու համար հնարավորինս շուտ դիմել: Տարածքային ստորաբաժանումը դիմելուց 10 օրվա ընթացքում վերջինս պետք է որոշում կայացնի թույլտվություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

«Նվիրված երիտասարդների օրհնության օրվան»

Վահան քահանա Ազարյանի նախածնունդյամբ Սուրբ Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ եկեղեցու կամարների տակ անց կացված միջոցառումը իր տեսակի մեջ եզակի երևույթ էր հարյուրավոր վանածորցիների համար: Արժեքավոր, քանզի առօրյա կյանքում տարված կենցաղային հոգսերով, աշխատանքով, որքան լցված լինենք երկնային ներշնչանքով, միշտ հնարավոր չէ միանգամից հաղորդակցվել թե՛ երաժշտությանը և գրականությանը, թե՛ հոգևոր արժեքներին ու աստվածայինին:

Երիտասարդ նկարիչների շուրջ 48 աշխատանքներ միջոցառման մասնակիցներին հիացրեցին իրենց արտահայտչակամությամբ, նախընտրած թեմային համարձակ մոտեցմամբ:

Նոնա Սարգսյանի, Քրիստինա Դալլաքյանի, Սամվել Չոհրաբյանի, Միեր Չատինյանի աշխատանքներում կար ասելիք, գունազգացողություն:

Նրանք դեռ ստեղծագործական խնդրումների մեջ են, ճիշտ ճանապարհի վրա և անպայման դրական արդյունքների կիսանեն, և այս միջոցառումը խթան կիսանդիսանա նրանց ինքնահաստատմանն ու ինքնադրսևորմանը:

Միջոցառմանը առանձին շուք հաղորդեցին երիտասարդ ստեղծագործողների՝ նովգորոցի մեր հայրենակցուհի Լարիսա Կարապետյանի (վոկալ), պետական կոնսերվատորիայի ուսանող Տիգրան Սիրադեղյանի (ջութակ), Անուշ Նարոյանի (ֆլեյտա), Կարինե Երիցյանի (դաշնամուր) կատարումները:

Երիտասարդների անհատական ստեղծագործական մոտեցումներն էլ ավելի ցայտուն դարձան երաժշտական ու գրական արտահայտիչ այդ կատարումների շնորհիվ:

Ճիշտ նկատեց զրուցակիցս՝ ճանաչված քանդակագործ Բոգդան Յովհաննեսյանը՝ նշելով.

- *Ըստ իս, եկեղեցին նոր ժամանակաշրջան է ապրում:*

Միջոցառումն իրոք երևույթ էր՝ եկեղեցի-երիտասարդություն կապի միջոց: Դրա հետ մեկտեղ երիտասարդությանը ավանդույթների ակունքներին մոտեցնելու և մեկ աստվածահաճո հնարավորություն:

Միջոցառման միտքն էլ ավելի արտահայտիչ գնահատեց գեղանկարիչ Խաչիկ Ղաբաբեկյանը.

- *Երևույթի խորությունը կայանում է նրանում, որ այս միջոցառումը տեղի է ունենում առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում:*

Արվեստագետն ինքը ճգնավորն է իր գործի, և եթե երիտասարդը ցուցադրվում, գնահատանքի է արժանանում հենց այստեղ, կարծես թե օրհնվում ու կնքվում է այս կամարների տակ...

... և այսպիսի հանդիպում

ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի այցը Վանաձոր՝ հանդիպելու զինծառայողների ծնողների, հարազատների, հանրության մյուս ներկայացուցիչների հետ առանձնացավ և նրանով, որ բարձրաստիճան պետական այրը մասնակցեց նաև Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի սրահներից մեկում կազմակերպված «Մեր բանակը» գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսին:

Մարզի գեղարվեստի և հանրակրթական դպրոցների սաների շուրջ 500 աշխատանքներից ընտրված 100 լավագույնները ներկայացված էին սրահում:

Հեղինակավոր ժուրիի կողմից որոշվեցին հաղթողները՝ Ռոբերտ Ղարիբյանը - քանդակ (Վանաձորի թիվ 6 դպրոց, դասատու՝ Սարգիս Ղարիբյան), Լուսինե Գինոսյանը - գեղանկար (Վանաձորի գեղարվեստի դպրոց, դասատու՝ Ջենֆիրա Մոսիմյան), Աննա Առաքելյանը - գեղանկար (Վանաձորի թիվ 11 դպրոց, դասատու՝ Նաիթա Անդրեասյան), որոնք պաշտպանության նախարարի կողմից խրախուսվեցին թանկարժեք նվերներով, համակարգիչներով:

Խրախուսական գեղեցիկ նվերներից ամենա չնցաց և ոչ մի մասնակից: Պատանի ստեղծագործողների «հանդուգն» խնդրանքը՝ հարցազրույց ունենալ նախարարի հետ, և անակնկալ էր ներկա գտնվողների համար, որոնք իրենց «հուզող» հարցերն ուղղեցին նրան.

Տիգրան Հարությունյան.
- Պարոն նախարար, մանկուց ի՞նչ եք երազել դառնալ:
- *Երևի թե պատմաբան:*
Արմեն Ռաֆայելյան.
- Պարոն նախարար, դուք թոռնիկ ունե՞ք:
- *Այո՛, մի պուճուրիկն ունեմք (ժպտալով):*
- Իսկ դուք, այդքան զբաղված լինելով հանդերձ, ժամանակ գտնում ե՞ք նրանով զբաղվել:

- *Շատ քիչ, բայց աշխատում եմ գտնել այդ ժամանակը:*

Վաղվա բանակը այսօրվա այս պատանիներն են, որոնք նկարներն ու քանդակները տոգորված են հայրենասիրական ոգով, ասել է, թե ամեն մի նկար, քանդակ բնութագրում էր պատանի ստեղծագործողի հայրենասիրական ոգին: Սա է գրականներից մեկը՝ վաղվա հզոր երկրի ու բանակի:

*Արսեն ՌԱՖԱՅԵԼՅԱՆ
գեղանկարիչ, ՎՊՄԻ դասախոս*

«ԱՋԵՐԻ» ԺՈՂՈՎՈՒՐԴ ԶԿԱ

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ վերջերս դիմեց լրատվամիջոցներին. «Բավական է մեր թշնամիների ջրաղացին ջուր լցնել: «Ազերի» ազգություն գոյություն չունի: «Ազերի» ժողովուրդ չկա՝ մեր պապերը շատ ճիշտ են անվանել՝ թուրքեր, շիա թուրքեր: Կամ կովկասյան թաթարներ, ինչպես ռուսներն են ասում»:

ՔԱՆԻ՞ ՀԱՄԱՅՆՔ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը բաժանված է 926 վարչա-տարածքային միավորի՝ համայնքի, այդ թվում՝ 48 քաղաքային, 866 գյուղական և 12 թաղային: Ամենախոշոր քաղաքային համայնքներն են Երևանը (1 մլն 104 500 մարդ), Գյումրին (147 հազ. 800 մարդ) և Վանաձորը (105 հազ. 200 մարդ):

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Լոս Անջելեսում հիմնադրվել է Կալիֆոռնիայի հայերի միությունը: Կազմակերպությունն ընտրել է 17 հոգիանոց վարչություն, որն էլ նախագահի պարտականությունները հանձնել է նախկին ծանրորդ, օլիմպիական չեմպիոն Յուրի Վարդանյանին:

Երկքաղաքացին չի կարող առաջադրվել որպես ՀՀ նախագահ

Փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց երկքաղաքացիության ինստիտուտն ամրագրող օրենսդրական փաթեթը, ըստ որի ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ, եթե վերջին երեք տարում մշտապես բնակվել է Հայաստանում, կարող է բացատրվել հայերենով և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը: ՀՀ քաղաքացու հետ ամուսնացած, ՀՀ քաղաքացի երեխա ունեցող, նախկինում ՀՀ քաղաքացի ծնողներ ունեցած անձինք, ծագումով հայերը և 1995թ. հունվարի 1-ից հետո իրենց դիմումի համաձայն ՀՀ քաղաքացիությունը դուրս եկած անձինք կարող են ՀՀ քաղաքացիություն ստանալ պարզեցված կարգով: ՀՀ երկքաղաքացին ունի ՀՀ քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտավորությունները և կրում է պատասխանատվություն՝ բացառությամբ միջազգային պայմանագրերով կամ ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի: Երկքաղաքացիները ընտրություններին մասնակցում են նույնկերպ, ինչպես միայն ՀՀ քաղաքացիություն ունեցող անձինք: Երկքաղաքացին չի կարող առաջադրվել որպես ՀՀ նախագահի, Աժ պատգամավորի թեկնածու:

ՊԵՏՔ Է ՀԻՇԵՆՔ

Նարեկ Մեսրոպյան մարդը, լրագրողը

Ի վերուստ սահմանված ժամանակ է մարդն աշխարհի գալիս՝ հարաբերվելու բնությանն ու մարդկությանը:

Գիտակից էակ լինելով հանդերձ՝ մարդ արարածն ավելի շատ ապրում է բնագոյով, քան գիտակցությամբ:

Ուն ախորժակ ցավ չէ և ոչ էլ վաղվանն ու երեկվանը. դա եկել է մարդու հայտնվելու հետ ի սկզբանե: Ես հավատում եմ, որ կա տիեզերական ուժ՝ բանականություն, որն ավելի վեհ է ու տրված է քչերին:

Այդ քչերից մեկն էլ Նարեկ Մեսրոպյանն էր՝ այդ բանականության կրողներից մեկը, որ իր գործունեության ընթացքում տվել է առկայծուններ՝ բռնկումներ, որոնք կոչված էին հայ մարդու առօրյա հոգսերին, համազգային խնդիրներին, մտահոգություններին, իրձերին ու երազանքներին:

Նա փորձել է գտնել, իր համար որոշակիացնել, այնուհետև զգացած-հասկացած-ընկալածը ներկայացնել ժողովրդին ու ակնկալել, որ իր հնչեցրածը կունկնդրեն, կհասկանան ու կգնահատեն:

Պատկերներ չեն եղել նրա երջանիկ տառապանքի դիմաց, այլ ընդամենը հասկացված ու ընկալված է եղել:

Սիս այս առաքելությամբ էլ իրեն տրված ժամանակն ապրեց ու ստեղծագործեց Լոռվա աշխարհում ծնունդ առած Նարեկ Մեսրոպյան մարդը:

Այսօրվա հեռավորությունից պահանջ է դառնում Նարեկ Մեսրոպյան մարդու կերպարը հնարավորինս լուսաբանելու, ներկայացնելու նրա արժանիքները, մարդկային նկարագիրը: Նա որպես լրագրող-հրապարակախոս, մշտապես թափանցել է ամենամոլորիկն ու խրթին հիմնահարցերի մեջ, վեր հանել հայ իրականության առկա հիմնախնդիրները:

Տքնանքով որոնել, գտել է հաղթահարման ուղիները, ներկայացրել ժամանակը՝ դառնալով իր ժամանակի ոգին՝ խորախորհուրդ, պատկերավոր, ճշմարիտ ու համամարդկային:

Բնավորության, զսպվածության ու ճկուն տրամաբանության շնորհիվ միշտ էլ հուսալի խարիսխ է եղել ընթերցող համերկրացու համար:

Լրագրողի աշխատանքը շատ բարդ է, լրագրողի մասնագիտությունը պատասխանատու՝ անկեղծ, անդավաճան իր սկզբունքներին, անկաշառ, օբյեկտիվ, հետևողական: Եթե բարոյականություն է քարոզում, ինքը պետք է կատարյալ բարոյական նկարագիր ունենա, եթե անկեղծության մասին է խոսում, անկեղծ լինի: Ողջ գիտակցական կյանքում Նարեկ Մեսրոպյանը չի շեղվել այդ սկզբունքներից: Մարդկային հմայքով իր շրջապատին գերել իմաստուն խոսքով, խոր դիտողականությամբ: Դրանով էլ դարձել բոլորին: Նարեկ Մեսրոպյան Մարդու Տեսակով տպագիր մամուլում ահա այսպես է գնահատում ՀՀ նկարիչների միության անդամ, գեղանկարիչ Խաչիկ Ղարաբեկյանը:

- Նարեկ Մեսրոպյանը մեր ժամանակների հայ լրագրության վառ դեմքերից է: Նրա սուր, անկեղծ հրապարակումները զրավում էին ընթերցողներին, նրանց հոգիներում գտնում փոխըմբռնում ու ջերմ արծագանք: Ինչպես լինում է թատրոնում, ուր հանդիսատեսը գնում է կոնկրետ դերասանի հետ հանդիպման, այնպես էլ ընթերցողը գնում էր կրպակ՝ Նարեկ Մեսրոպյանի հերթական հոդվածի ակնկալիքով:

Նրա գրիչը հաճախ դառնում էր գոտեպնդող բարեկամի ձեռք՝ մեկնված կարոտայլին, ճակատագրի հալածյալին:

Նարեկ Մեսրոպյանը հայ լրագրությանը բերեց նոր ոգի և ուղղություն, իսկ դրանք շատ են. հիմնադրել ու խմբագրել է «Արեգ» թերթն ու ռուսալեզու «Дружба»-ն, որը նվիրված է աղետի գոտու վերականգման ու կյանքի պրոբլեմներին, անցել շարքային լրագրողից մինչև քաղաքային «Վերածնունդ» թերթի խմբագրի ճանապարհը, եղել է «Голос Армени» թերթի առաջնակարգ հրապարակախոսը: Եվ պատահական չէ, որ 1993 - ին արժանացավ Հայաստանի լրագրողների միության «Ոսկե ծայր» մրցանակին:

Հովիհաննես Կարապետյան - ՀՀ լրագրողների միության ան-



դամ, հրապարակախոս.

- Նարեկ Մեսրոպյանը որպես լրագրող, անհատականություն, լայն ընդգրկում ուներ: Նյութը, որի մասին գրում էր, շատերիս արդեն ծանոթ էր մինչև գրելը: Բայց և այնպես անհամբերությամբ էինք սպասում դրա լույս ընծայմանը, կրկին կարդում: Եվ մեզ համար այնտեղ նոր երանգներ էին հայտնվում, որոնք մինչ այդ կարծես չկային: Շատերը նրան գիտեին որպես շնորհաշատ լրագրողի, բայց ասեմ, որ նա նաև հրաշալի դեկավար էր ու խմբագիր:

Շատ երիտասարդ լրագրողների մոտ (և ոչ միայն երիտասարդների) լրագրողական նոր ծալքեր հայտնաբերվեցին, երբ Նարեկ Մեսրոպյանը գլխավորեց քաղաքային «Վերածնունդ» թերթը:

Սովորաբար ընդունված է ասել, որ սպիտակ թուղթը դիմադրում է, գրելիք նյութը միշտ չէ, որ հեշտ է եմթարկվում:

Բայց նա թղթի հետ իրեն զգում էր, ինչպես ձուկը ջրում: Մեկերկու փաստ, տվյալ, և ասես կախարդական ուժով ծնվում էր ասելիքը, որը ոչ միայն ընթերցողական, այլև հրապարակախոսական մեծ արժեք էր ներկայացնում:

90-ականներին (Հայաստանի համար ծանր ժամանակաշրջանում) շատ մարդիկ նրանում տեսնում էին իրենց մտքերին ու ակնկալիքներին կարեկից ու համախոս:

«...Տարեային աղետ, թե կյանքի դժվարություններ, հոգսեր, թե մարդը մարդուն պատճառած ցավ, սրտի ուրախության արթնացման ցանկություն... մի խոսքով, հոգու, թե մարմնի ցավ, միշտ էլ կարևոր է, երբ կողքիդ մեկը կա, կարևոր չէ, թե ով է,

կարևորը նրա՝ այդ ինչ-որ մեկի լինելու հանգամանքն է, ով կիսուն է ցավոք, ցրուն տրամադրությունը, ով թեկուզ միայն ընդամենը լսում է քեզ»:

Այդ մեկը իր հազարավոր ընթերցողների համոզմամբ Նարեկ Մեսրոպյանն էր:

Նա բառացիորեն վառվեց՝ փորձելով ուրիշների մեջ էլ վառել կամքի ուժ կյանքի ու պայքարի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետություն» թերթի թղթակից անդամ, գրող-երգիծաբան Գագիկ Անտոնյանը համոզված է, որ Նարեկ Մեսրոպյանն առանձնանում էր յուրօրինակությամբ.

- Այն, որ գիտեր մարդկանց հոգիներում շարժել ամենանուրբ լարերը, հուզել նրանց կարծրացող սրտերն ու հոգիները, նրան օգնեցին արտակարգ գրական տաղանդը, խոսքին հատուկ բանականությունը, թարմությունը, նուրբ ճաշակը:

Ըստ էության նրա գրավոր խոսքի կարիքն ու պահանջարկը տեղին ու ժամանակին էին: Եթե ոչ միշտ, բայց հաճախ այդ խոսքի պակասից առաջացած դատարկ տարածությունը լցվում է ոչ թե ավանդական մտածողության հետ կապված հասկացություններով, այլ փոխ է առնվում մեր ժողովրդի հոգեբանությունն ու կերպը չարտահայտող օտարությունը:

Նարեկ Մեսրոպյան մտավորականի նպատակը իր ժողովրդին ազգային ոգով տանելու, ժամանակակից մտածողությամբ կյանքն իմաստավորելու ձգտումն էր: Նրա ճշմարիտը կայանում էր նրանում, որ անտարբեր չէր, կնկատեր ու կգնահատեր մշակույթի մշակին, մտավորականին, հասարակ մահկանացուին...

Լրագրությունն ու հրապարակախոսությունը բնավ էլ չեն ամփոփում այն, ինչը կարողացել է անել Նարեկ Մեսրոպյանը:

Նա նաև թատերագիր էր ու արձակագիր:

Ահա մշակույթի ջատագով մարդու՝ Նարեկ Մկրտչյանի համոզմունքը, որը բնագավառի «դարբնոցում» բարձր է գնահատում իր ընկերոջ, մտավորականի ստեղծագործ ուժը.

- Մեծ գրող դառնալու հավականություններ չունեիր, բայց կարծում եմ, որ այս ասպարեզում նրա գործունեությունը կլիներ օրինաչափ ու ցանկալի, քանզի օժտված էր և այս ուղղությամբ:

Նրա հոգին կարծես տեսնում էր ամեն ինչ, նրա աչքը զգում ամեն բան: Եվ զարմանալի չէ, որ նա կարողանում էր առանց որևէ ճիգի՝ շնչելու ու արտաշնչելու պես բնական ստեղծագործել գրական տարբեր ժանրերով ու տեսակներով:

Դրամատուրգիայի ասպարեզում «Սաթենիկը Փարիզից», «Մեռնենք, որ ապրենք», որպես առաջին փորձ խոստումնալից էին, օժտված գեղարվեստական հատկանիշներով: Վահե Շահվերդյանը ճիշտ նկատեց այդ արժեքները, բեմադրելով դրանք Հովհաննես Աբելյանի անվան թատրոնում, թատրոնի խաղացանկը հարստացնելով այդ բեմադրություններով:

Եվ մենք երախտապարտ ենք նրան, որ մեզ շրջապատեց իր լուսավոր գրքերով՝ մոր լիցք տալով մեր հոգու ծայրին:

Մարդիկ կան, որոնց հարգն ու պատիվը ժամանակի մեջ ավելի է արժևորվում ու բարձրանում վեր, նույնիսկ, երբ նրանց եռանդն ու կարողությունները մնում են կյանքի ճամփաբաժնին:

Հոգևոր, մտավոր ուժերի բուռն ժայթքման շրջանում հեռացավ կյանքից՝ մարդկային ու պրոֆեսիոնալ խիղճը երբեք աճուրդի չդրած, լրագրության ասպարեզում չնահանջելով իր վեհ գաղափարներից:

Ապրեց իրեն հայտնի ճշմարտությամբ. ժողովրդի սիրուն կարծանանաս՝ վերադարձնելով նրանից ստացածը:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԾԻԾԱՂԻ ՄԱԵՍՏՐՈՆ



Հանճարեղ մարդ էիր, ծնված բեմի համար, Օժտված բոլոր, բոլոր շնորհներով վերին, Դու արվեստի խաչը՝ թեթևությամբ տարար, Հիշատակիր Վանքը՝ թողիր սերունդներիս:

Ղերեմիկ Գևորգյան

1923թ. հունվարի 23-ին Ախալցխայի հայկական ընտանիքներից մեկում ծնվեց մի մանուկ, ում, Հրաչյա Ղափլանյանի գնահատմամբ, վիճակված էր դառնալ ծիծաղի անօրինակ և չծերացող Վարպետ:

Կարպ խաչվանքյան... Ամպագոռոգ բառեր պետք չեն՝ ներկայացնելու համար, թե նրա անունը հայ թատերասեր հասարակության համար որքան թանկ է ու սիրելի: Անհնար է պատկերացնել, թե ինչ ընթացք ու զարգացում էր ապրելու հայ օպերետային թատրոնը, եթե նրա բեմը չբոցավառվեր ախալցխացի այդ գանգրահեր ու գեղեցկադեմ տղայի հմայքից:

Դեռ մանկուց Թիֆլիսի կրկեսի, պատանի հանդիսատեսի շուսական և ապա Գրիբոյեդովի անվան թատրոնների խաղացանկերի ոչ մի ներկայացում բաց չթողած պատանին երագրում էր դերասան դառնալ: Եվ այդպես էլ՝ պայուսակում ավելի շատ պիես ու դեր, նկար ու երգ, ուշք ու միտքը

թատրոնին, շուրջը, ամեն ինչում միայն խաղ ու հանդիսատես տեսնելով, ավարտեց դպրոցը: Պատերազմը Մոսկվայում թատերական կրթություն ստանալու նրա երազանքը թողեց անկատար, ուստի միակ ընտրությունը «Վրացֆիլմ» կինոստուդիայի կինոդերասանական դպրոցն էր, որն ավարտելուց հետո մի քանի թատրոններում աշխատելու հրավեր ստացավ: Սակայն... (դե եկ ու մի հավատա նախախնամությամբ) Երևանից ստացվում է մի հեռագիր.

«Թբիլիսի «Վրացֆիլմ» կինոստուդիայի կինոդերասանական դպրոց-ստուդիա. Կարպ խաչվանքյանին».

Հրավիրում ենք աշխատելու Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնում:

Արտեմի Այվազյան
Թատրոնի գեղարվեստական ղեկավար 1944թ. հուլիսի 12, Երևան»:

Մի կարգին հայերեն չիմացող Կարպը երկընտրանքի մեջ էր, բայց քանի որ արյան կանչն առավել զորեղ էր, ուստի 21-ամյա պատանին եկավ Երևան: Քաղաքին բոլորովին անծանոթ Կարպ խաչվանքյանի առաջին ծանոթն ու բարեկամը արվեստաբան Սերգեյ Առաքելյանն էր, ում հենց էն զլխից Կարպին Կարպուշա կոչելու իրավունք տրվեց. «Հայարտ եմ, որ բախտ եմ ունեցել մտնելու «Մխոհանոց» ստեղծագործական «խոհանոց»:

Չտիրապետելով մայրենի լեզվին՝ Կարպն ինձ խնդրում էր արտագրել հայաբառ իր դերերի տեքստը ռուսերեն տառերով, - պատմում է Սերգեյ Առաքելյանը:

Լիզենությունը, բայց Կարպին ներքե՛ նրա բոլոր «շեղուններն» ընդունելով իբրև բնականոն մի բան: Պատճառը: «Անսահման հմայքն էր, դեռ կուլիսներից լսվող նրա ձայնից դահլիճն արեկոծվում էր: Նրա առասպելական խաղը մագնիսի մեծ ձգում էր հանդիսատեսին»: «Սկզբից ևեթ Կարպուշան բեմում երբեք չի խնայել իրեն, - պատմում է նրա 50-ամյա բեմական հաղթարշավի արժանավոր զուգընկեր Սվետլանա Գրիգորյանը: - Հիշարար անգամ խաղացած դերը նա խաղում էր այնպես, ինչպես պրեմիերայի օրը՝ նույնը պահանջելով իր խաղընկերներից: Տասնամյակներ շարունակ խաղընկեր եմ եղել նրան և խոստովանում եմ, որ ամեն անգամ հուզվել եմ, երբ խաղացել եմ Կարպի հետ: Նա շատ պահանջկոտ էր: Նրա հետ հեշտ չէր խաղալ, երկի դրա համար էլ սիրել եմ նրա խաղընկերը լինել»:

1944 թվականին Կալմանի «Սիլվա» օպերետում Բունինի առաջին իսկ դերակատարումով խաչվանքյանը ցուլաց որպես մոր աստղ, իր գեղեցիկ արտաքինով, ճկունությամբ, պարային թռիչքներով, փայլուն վոկալով և միայն իր խաչվանքյանական առոգանությամբ անմիջապես նվաճեց հանդիսատեսի սերը: Քիչ դերասաններ կան, ովքեր իրենց խաղով կարող են շունչ տալ կերպարներին ու ասելիքը հասցնել հանդիսատեսին այնպես, ինչպես դա հաջողվում էր Կարպ խաչվանքյանին: Նրա խաղացած 100-ից ավելի դերերը միշտ ծիծաղ են պարզել հանդիսատեսին: «Եվայլն կամ Նոր Դիոգենես», «Մորգանի խնամին», «Վենետիկյան երկվորյակներ», «Բաղնիքը անուշ», «Ախ, ներվեր, ներվեր», «Դե, իհարկե», «Պահանջվում է ստախոս»-ը, որի մասին լուսանցելեայան «Նոր կյանք» թերթը 1989-ին գրել էր. «Եթե մեկամաղձոտ ու անտրամադիր ես, մի՛ երթար հոգեբույժին, այլ

գնա ու տես «Պահանջվում է ստախոս»-ը: Երեք ժամ խնդա ու զվարճացիր: Վայելե ազգիդ հրաշք տղան՝ Կարպ խաչվանքյանը և վստահ եղիր, հոգիդ պիտի թեթևանա անպայման»: Իսկ 50 անգամ խաղացած «Տաքսի-տաքսին» 51-րդ անգամ էլ ընթանում էր լեփ-լեցուն դահլիճում: Յուրաքանչյուր ներկայացումից հետո ժամանակ էր պետք, որպեսզի դերասանի մեջ եղած կրակը աստիճանաբար մարեր ու նա դուրս գար կերպարից:

Ռեժիսորի համար բախտավորություն է, երբ հանդիպում է ամեն ինչ ըմբռնող և կերպարի առանձնահատուկ սուր զգացողությամբ օժտված դերասանի, որն ընդունակ է հասկանալ կես խոսքից: «Կարպի հետ բախտ եմ ունեցել աշխատելու երկու ներկայացում պատրաստելիս, - գրել է Վարդան Աճեմյանը: - Հատկապես գրավել-հմայելու զարմանալի ունակությամբ օժտված այս դերասանը ինչ դերում էլ բեմ էլնի՝ մեծ թե փոքր, գլխավոր թե երկրորդական, մի քանի ռոպե անց ողջ դահլիճի ուշադրությունը նրան է գամվում, բոլորը նրանով են վարակվում»:

«Լինելով փայլուն դերասան՝ անհրաժեշտություն չկար նրան սովորեցնել ողջ այբուբենը, բավական էր նրան ասել միայն «ա» տառը և վերջ, մնացածը նրա համար պարզ էր ու հասկանալի, - հիշում է Երվանդ Ղազանջյանը: - Նա իմպրովիզի մեծ վարպետ էր, իսկ իմպրովիզ անելու համար մեծ տաղանդ է պետք, որով ցողված էր միայն թաթևի Սարյանի, Միհր Մկրտչյանի և Կարպ խաչվանքյանի արվեստը: Նրանք էին, որ նույն նախադասությունը կարող էին հարյուր անգամ կրկնել, առանց հանդիսատեսին հոգնեցնելու (ես հիմա ի՞նչ անեմ, էս ճանապարհն ո՞ւր դնեմ)»:

Կարպ խաչվանքյանը մինչև վերջ հավատարիմ մնաց իր ժանրին, ու թեև նրա խաղը հաջողված էր նաև կինոարվեստում («Արարատյան դաշտի աղջիկը», «Պատվի համար», «Ճանապարհի դեպի կրկես»,



«Ատանմաբույժն արևելյան»), այնուհանդերձ, նա կինոդերասան չդարձավ: «Ինձ համար արժեք ունի միայն այն, ինչ արել և անում եմ թատրոնում, իմ հարազատ տանը», - մի առիթով ասել է նա:

Զավագանց մեծ է Կարպ խաչվանքյանի ստեղծագործական վաստակը հատկապես թատրոնի ստեղծագործության այն շրջանում, երբ որպես գեղարվեստական ղեկավար նա ոչ միայն պահպանում էր խաղացանկի լավագույն բեմադրությունները, այլև ինքն էր բեմադրում նոր գործեր «Իմ չքմաղ լեղի», «Սև վիշապ», «Իմ զոքանջը», «Սեր աստղերի տակ», որոնցում նա նաև գլխավոր դերակատարն էր:

Իրավացի էր Պարույր Սևակը, երբ խաչվանքյանին համարում էր հայ թատրոնին լծված ամենամեծը մշտյանների մեկը, իսկ Մետաքսյա Սիմոնյանի կարծիքով Կարպը բեմի արքան էր: Ուստի, զարմանալի չէր, որ ժողովուրդը Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական թատրոնն անվանում էր «Կարպի թատրոն»:

Հանդիսատեսին ծծողից ուշաթափու-

թյան հասցնող խաչվանքյանը թատրոնից դուրս լռակյաց էր, անգամ տխուր: «Պատկերացրեք, ես նույնիսկ անեկդուր պատմել չգիտեմ, - ասում էր նա: - Ես դերասան եմ միայն բեմի վրա: Ինձ համար հուճուրդ բեմում է, բեմից դուրս ես վայելում եմ ուրիշների հուճուրդը»:

Նրա հետ հետաքրքիր էր նույնիսկ լռել և սպասել, թե երբ պիտի խոսի կամ թե պոռթկա՞յ իր ասելիքը տվյալ պահին ասելու համար: «Բեմում կարծես բոցկլտացող կրակ լինեք, որը թեժանում էր բեմի վրա, թեժանում և այնուհետև բեմից հեռանալուց հետո իր հետևից թողնում էր իրդեհից առաջացած «ավերածությունը», - այդպիսին է Կարպը Յուրի Ամիրյանի հուշերում:

Պատկերացնում եք, թե ինչպիսին կլինեք երաժշտական կոմեդիայի թատրոնը առանց խաչվանքյանի: Հաստատ մի գույն կպակասեր, իր խաչվանքյանի գույնը: «Ինքնաբացած հանդիսատեսը ոգի էր առնում ոգեղեն խաչվանքյանից, այն ոգին, որ խաչվանքյանը բերում էր իբրև հայոց խաղողի արյան եռք, - գրում է Ժիրայր Անանյանը, - դա ծիծաղի համատարած գինարբուք էր, որ բեմից ժայթքում ու մեզ վրա էր թափվում ջրվեժի պես, ու մենք ոտքից գլուխ դառնում էինք խաչվանքյանոտ, ոտից գլուխ թաթախվում էինք նրա ծիծաղի ցուլքերով»:

Այո, խաչվանքյանը Երևան չգալ չէր կարող: Եթե չգար 1918թ. հայոց պառլամենտի շենքը Կոմեդիայի թատրոնի վերածված բեմից ո՞վ պիտի ծիծաղեր այս աշխարհի անիրավությունների վրա...

Վերջաբանի փոխարեն

Երբ բեմից արտասանում էր իր հերոսի խոսքերը՝ «Աշխարհում կա՞ մի մարդ, որը կարողանար ինձ սիրել», - դահլիճից հընչեց հանդիսատեսի միահանուռ պատասխանը՝ Սենք...

ԱՆՈՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Չ3 ԵՐԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ԱՇԽԱՏԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Դրա համար սահմանված է 10 օր:

- **Որոշումը կայացնելիս, դիմումը բավարարելիս կամ մերժելիս ի՞նչ հանգամանքներ են հաշվի առնվում:**

- Հաշվի է առնվում երկու հանգամանք. նախ, այն, թե տարեկան քվոտայի սահմանները լրացված են, թե՞ ոչ, իսկ քվոտան ոչ վիզային երկրների (*ԱՊՀ երկրների մի մասին, այդ թվում՝ Նաև Հայաստանի.- Ա.Գ.*) քաղաքացիների համար Ռուսաստանում սահմանված է 6 միլիոն: Այսինքն դիմումն այս առումով կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ տվյալ դիմումատու արդեն վեց միլիոն մեկերորդն է: Սակայն նկատի ունենանք, որ 6 միլիոնը մեծ թվաքանակ է: Մյուս նախապայմանն այն է, թե տվյալ դիմումատուի 18 տարին լրացել է, թե՞ ոչ: Թույլտվությունը տրվում է մեկ տարի ժամկետով, դրանից հետո նորից պետք է դիմել թույլտվություն ստանալու համար:

- **Ուրիշ ի՞նչ նորություններ է պարունակում նոր կարգը:**

- Նախկինում տարածքային ստորաբաժանմանը կարող էին դիմել և՛ գործատուն, և՛ նրա մոտ աշխատանքի անցնելու ցանկություն ունեցող քաղաքացին: Հիմա տարածքային ստորաբաժանմանը դիմելու պարտականությունը դրված է քաղաքացու վրա: Նրանից բացի, քաղաքացու անունից կարող է դիմել նաև միջնորդ կազմակերպությունը, որն այդպիսի ծառայություն է մատուցում:

- **Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտը հիշյալ թույլտվությունը ստանալուց հետո, Ռուսաստանում ի՞նչ կարգավիճակ է ձեռք բերում:**

- Այդ թույլտվությունը նրան նաև մեկ տարով բնակության իրավունք է տալիս: Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ ներկայումս տրվող աշխատանքային թույլտվությունը նրան չի կապում կոնկրետ գործատուի հետ: Նա ազատ է: Նախկինում այդպես չէր, թույլտվությունը աշխատողին կապում էր որոշակի գործատուի հետ, ինչը ճորտատիրական ինչ-որ կախվածություն էր հիշեցնում: Աշխատողն այլ գործատուի մոտ չէր կարող աշխատանքի անցնել, եթե անցներ, դա

օրինական չէր դիտվի:

- **Ի՞նչ պատժամիջոցներ են նախատեսված աշխատանքի թույլտվություն չունեցողների համար:**

- Դրանք խստացել են, ընդ որում, ոչ այնքան քաղաքացիների, աշխատանքային միգրանտների, որքան գործատուների նկատմամբ: Եթե որևէ գործատուի մոտ չձևակերպված, աշխատանքի թույլտվություն չունեցող օտարերկրյա մեկ քաղաքացի հայտնաբերեն, 800 000 ռուսական ռուբլու տուգանք է նախատեսված, որը 30 000 դոլարին համարժեք գումար է: Օրենքով նույնիսկ թույլատրված է մինչև 3 ամսով դադարեցնել այդ գործատուի գործունեությունը, ինչը տվյալ ձեռնարկությանը կամ ընկերությանը կարող է սնանկացման հասցնել:

- **Իսկ ի՞նչ պատիժ է նախատեսված հիշյալ թույլտվությունը չունեցող աշխատողների նկատմամբ:**

- Սահմանված է մինչև 5000 ռուբլի տուգանք, սակայն առավել էականն այն է, որ նրան կարող են 5 տարով զրկել Ռուսաստան մուտք գործելու իրավունքից: Բացի այդ, խախտումը հայտնաբերելու դեպքում հավանաբար նաև արտաքսման խնդիր կդնեն:

- **Իսկ եթե մեր երկրի քաղաքացին աշխատանքի թույլտվություն է ձեռք բերում, կարո՞ղ է հասնել նրան, որ իր աշխատանքային գործույլում համապատասխան գրառումներ կատարվեն, որպեսզի հետագայում համապատասխան ստա՞ծ հաշվարկվի:**

- Իհարկե, այո: Այսինքն՝ տվյալ աշխատանքային միգրանտը ստվե-րից ամբողջությամբ դուրս է գալիս, և նոր կարգն առաջինն իր շահերին է ծառայում: Բացի այդ, աշխատանքի թույլտվություն ստացած անձը, եթե խնդիր առաջանա, լիարժեք կարող է դիմել իրավապահ մարմինների օգնությանը և պաշտպանությանը:

Արթուր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-110

ՉԱՐԵՆՑԸ ԵՎ ԱՐՎԵՍԱՆԸ

Եղիշե Չարենցը 20-րդ դարի համադարձերից է: Ցանկացած այլ գնահատական անհարիր կլիներ դեպի հավերժություն գնացող մեծ անհատականության համար: Արվեստի վերաբերյալ նրա հայացքները արդիական են, գրականության, արվեստի պատմության և տեսության ինտելեկտի հրաշալի օրինակ:

Շատերը փառքի արժանացան իրենց կենդանության օրոք, իսկ Չարենցը՝ մահից մի քանի տասնամյակ հետո: Չարենցը կապրի հավետ:

Անփոխարինելի է բանաստեղծի մատուցած ծառայությունը հայ արվեստին դրամատուրգի, թատրոն, երաժշտություն, կերպարվեստ: Արվեստի վերաբերյալ նրա դատողություններն ու դրույթները չեն հնացել և այսօր էլ արդիական են և արժանի լուրջ հետազոտության:

Չարենց արվեստագետը ձևավորվեց 20-րդ դարակազմին, երբ հայ գրականության և արվեստի ասպարեզում տեղի էին ունենում արմատական տեղաշարժեր:

1920-30-ական թվականներին, լինելով Հայաստանի գեղարվեստական կյանքի կենտրոնական դեմքը, նա ակտիվորեն մասնակցում էր մշակութային կյանքի աչքի ընկնող բոլոր երևույթներին: Հարուստ է նրա հետաքրքրությունների շրջանակը՝ դրամատուրգի, թատրոն, նկարչություն, ճարտարապետություն, մշակույթի պատմություն,



ժողովրդական բանահյուսություն, լեզվի ու գրականության հարցեր, մանկավարժություն, գրքի ձևավորում, ժուռնալիստիկա: Նա հանդես էր գալիս թատերագիտական հողվածներով, թատերական արվեստի մասին զեկուցումներով, խոսում էր միջին դարի լեզվի ու նրա դրամատուրգիայի մասին, քննարկում գրականության զարգացման խնդիրներ, բանավիճում ճարտարապետության մասին, անդրադառնում քաղաքական երգիծանքի և երգիծական պլակատի անհրաժեշտությանը: Չարենցը հրապարակած

էր երաժշտությամբ. ներկա էր լինում ժողովրդական և ազգային երգի երեկոներին: Շատ դեպքերում էլ հրավիրում էր երգիչների, լսում նրանց կատարումները, վիճաբանում երաժշտական հարցերի շուրջ:

1923-ին Ե. Չարենցի, Մ. Սարյանի, Մ. Մանվելյանի, Կ. Հալաբյանի, Վ. Թոթովենցի, Տ. Հախումյանի նախաձեռնությամբ երևանում հիմնվում է գրականության ու արվեստի բանավիճային ակումբ: Երևանը աստիճանաբար վերածվում էր գրական-մշակութային կենտրոնի: Այս մթնոլորտում են ձևավորվում բանաստեղծի գեղագիտական հայացքները: Արդիական են դառնում արվեստի դերի և մարդու կատարելության խնդիրները:

Իր երգի հարատևման հիմքը Չարենցը տեսնում է հենց այն բանի մեջ, որ այդ երգը հորդել-թխել է իր «դարի բորբոքում սրտից» («Մոնումենտ»): Իսկ «վերջին մատչանը» (հավատացած է բանաստեղծը, խոսելու է ընթերցողի հետ անգամ «դարերում նորեկ»):

Բանաստեղծը մարդու և ժամանակի, ներկայի և գալիքի անխզելի կապի մասին ունի հետևյալ բնորոշումը.

**Ուզում ես բարձրանալ ջր դարից,-
ուրեմն ոգով դու պիտի
Ձե՛ անցյալը զգաս հարազատ-
և թե նոր լինես ներկայում:**

Դարեր ապրելու համար պետք է կարողանալ ճիշտ ընկալել ժամանակի ընթացքը:

Եղիշե Չարենցը բարենցիկ անտեսելի կապի մեջ է եղել հայ գրականության ու արվեստի նշանավոր ներկայացուցիչների հետ.

«ԵՎ ԴՈՒ ԿԱՄ ՀԶՈՐ, ՄԱՐՄՆԱՅՈՒՄ ՈՒԺԻ»

Այս տարի լրանում է Եղիշե Չարենցի հարյուր տասներորդ տարեդարձը: Տարեդարձ, որովհետև ըստ ՀՀ կառավարության որոշման հոբելյանական տարի է համարվում հարյուրը, հարյուր քսանհինգը, հարյուր հիսունը... Սակայն հնարավոր չէր շրջանցել Եղիշե Չարենցի տարեդարձը: Տարին դեռ չսկսված Եղիշե Չարենցի տուն թանգարան «Ինչ է նախատեսվում անել» հարցով դիմել են տարբեր կազմակերպություններից: Հայաստանի գրողների միությունը, ՌԴ գրողների միությունը, Չարենցի տուն թանգարանը համատեղ ծրագրել են «Եվ դու կամ հզոր, մարմնացում ուժի» խորագրով գրական միջոցառումների մի ամբողջ շրջա, որը վերցրել են Չարենցի «Վահագն» բանաստեղծությունից: Չարենցյան թեմաներով հանդիպումներ կլինեն Երևան քաղաքի դպրոցներում, Երևանի պետական համալսարանի Չարենցի անունը կրող լսարանում, Ազգային բանակի զինվորական տարբեր ստորաբաժանումներում, միջոցառումներ կլինեն նաև Արցախում: Չարենցի տուն թանգարանում կլինի պատանի ստեղծագործողների նկարների ցուցահանդես, որտեղ կարտասցուլվեն պատանիների պատկերացումները հայրենասիրության մասին: Չարենցին է նվիրվելու Հայաստանի գրողների միության «Արեգնածին» գրական խմբակի այս տարվա մրցանակաբաշխությունը ու գիտության և կրթության նախարարության կողմից կազմակերպվող հանրապետական ասմունքի փառատոնը: Այս գրական երաժշտական



երեկոների ընթացքում կհնչի միայն չարենցյան պոեզիա:

Եղիշե Չարենցի դուստր Անահիտ Չարենցը և հայտնի հրատարակիչ Ալբերտ Իսոյանը միասին Չարենցի ձեռագրերի հիման վրա կազմել են Եղիշե Չարենցի ստեղծագործությունների մի ընտրանի, որտեղ գետեղվել են նաև մի քանի անտիպ գործեր, որոնք նա գրել է իր կյանքի վերջին տարիներին «Գիրք ճանապարհի» վեպը գրելուց հետո: Անտիպ էջերը բացելու են այն քողը, որով ծածկված են եղել Չարենցի կյանքի վերջին տարիներն ու ամիսները: Այդ գործերը բանաստեղծի ինքնախոստովանություններն են, նրա հոգեկարգը: Այն կիրատարակվի «Վերջին խոսք» վերնագրով:

Եղիշե Չարենցի ծննդյան տարեթիվը կնշվի նաև ՌԴ-ում: Նախաձեռնել են «Չարենց, թույլ տուր հենվել քեզ» խորագրով

գրական երեկոներ: Միջոցառումների խորագիրը վերցրել են Եվգենի Եվտուշենկոյի Չարենցին նվիրված ստեղծագործությունից: «Կարծում են, այդ տողը լավագույնս է արտահայտում Չարենցի նկատմամբ մեր ժողովրդի վերաբերմունքը», ասել է Հայաստանի հետ համագործակցության ռուսական ընկերության նախագահ, ՀԳՄ անդամ Վիկտոր Կրիվոպուսկովը: Չարենցյան թեմաներով հանդիպումներ կլինեն ռուս ընթերցողների հետ ոչ միայն Մոսկվայում, այլև Ռուսաստանի այլ քաղաքներում: Նախատեսվում է հրատարակել Չարենցի անտիպ գործերի ռուսերեն ժողովածուն: Այդ նպատակով հրավիրվել են թարգմանիչներ Միխայիլ Սինելնիկովին, որին կօգնեն արվեստաբան Էմմա Բուդադյանն ու բանաստեղծ, թարգմանիչ Գլան Օնանյանը:

Չարենցի «հոբելյանին» իրենց մասնակցությունում են բերել նրա ժառանգները՝ Անահիտ Չարենցը, Արվինդի Չարենցը, թոռնուհի Հասմիկ Չարենցը, անվանի ասմունքողներ Ազատ Գասպարյանը, Ժենյա Ավետիսյանը և շատ ուրիշներ: ՀԳՄ, ՌԴ գրողների միությունը, Եղիշե Չարենցի տուն թանգարանը տարին հայտարարել են Չարենցյան տարի: Այս սիմպոզիումի շրջան մեկնարկվեց մարտի 13-ին, Չարենցի անունը կրող հուշակոթողի շուրջը, որից հետո ցերեկույթը շարունակվեց Եղիշե Չարենցի տուն-թանգարանում:

Ժենյա ՀՈՎՀՆՆՆԻՍՅԱՆ

Արմեն Գուլակյան, Սուրեն Քոչարյան, Մարտին Մազմանյան, Սուրեն և Արամ Խաչատրյան եղբայրներ:

Բանաստեղծը միշտ եղել է արվեստագետների կողքին: Նրա ստեղծագործական առնչությունները Կ. Հալաբյանի, Մ. Մազմանյանի, Գ. Ջիտտոյի (Գ. Գրիգորյան), Մ. Ասլանազյանի, Կ. Կարալովի, Ե. Քոչարի և այլ նշանավոր արվեստագետների հետ նպաստեցին հայ արվեստի զարգացմանը:

Թատերագրության ասպարեզում նրա մտահղացումներն իմաստավորված էին և պահպանում էին դասականությունը նորարարության հետ համադրելու սկզբունքը:

«Չարենցը և արվեստը» թեման գրականագետների ու արվեստագետների ուշադրության կենտրոնում է եղել, շատերն են փորձել զբաղվել այդ հարցերով, բայց ոչ ոք չի համարձակվել նյութն ընդգրկել ամբողջությամբ, ներառել գեղարվեստի բոլոր բնագավառները: Տարբեր առիթներով և տարբեր ուսումնասիրություններում գերազանցապես Չարենցի թատրոնին վերաբերող հարցեր են լուսաբանվել, այն էլ լոկ մասամբ, հարևանցիորեն: Մինչդեռ թեման ինքնին հսկայական կարևորություն ունի հայ արվեստի վաղ և ոչ միայն վաղ շրջանն ուսումնասիրելու համար:

Հայ թատրոնում Չարենցի թարգմանությունը բեմադրվել են Ֆուրմանովի և Պոլիվանովի «Խռովությունը», Վսեվոլոդ Իվանովի «Ջրահազնացք 14-69», Գորկու «Դոստիգան և ուրիշներ» պիեսները: Եվ վերջապես Չարենցի «Կապկազ թամաշան», «Երկիր Նաիրին», Դեպի ապագան» և այլ ստեղծագործությունների բեմադրությունները նոր խոսք էին հայ թատրոնի պատմության մեջ:

Բանաստեղծն առնչվել է Վ. Փափազյանի, Ս. Քոչարյանի Ա. Խարազյանի, Դովի. Աբելյանի հետ: Ուշագրավ են Դովի. Աբելյանի, Ազնիվ Հրաչյայի, Սիրանուշի, Պետրոս Ադամյանի ձևաված նրա բանաստեղծությունները:

Ուշագրավ է Չարենց և Կոմիտաս հանձարների ճակատագրերի ընդհանրությունը:

Կոմիտասի ստեղծագործությունների նկատմամբ Չարենցի հետաքրքրությունը պայմանավորված է նաև բանաստեղծի գեղագիտական ըմբռնումների առանձնահատկություններով: Չարենցը լիաբուն նվիրաբերումով իրականացրեց երախտագետ զավակի իր պարտքը, ստեղծեց իր «ոգեղեն գրույցը» Կոմիտասի հետ և Կոմիտասի մասին, որը դարձավ «Մեծ ձայնապետի» հանդեպ բանաստեղծի անհուն սիրո ու զգացումի մարմնացումը:

Ռոբերտ ԴՎԹՅԱՆ

Վիլյամ Մարոյանի հուշերից մի հատված

Առաջնորդս զիս վերելակով տարավ պանդոկին երրորդ կամ չորրորդ հարկը, հետո նրբանցքե մը անցնելով, մենք կանգ առինք բաց դռան մը առջև: Չհասկացա, թե ուրկե հանկարծ երևաց Չարենց ժպիտը դեմքին, մենք իրարու ձեռք սեղմեցինք և հայերեն խոսեցանք:

Հետո ան ռուսերենով աղջկան բան մը ըսավ, և աղջիկը անգլերեն ինձ հայտնեց, թե ինք պիտի հեռանա և մեզի մենակ ձգե՛ մեկ ժամեն վերադառնալու պայմանով:

Հունիսյան օր մըն էր, ցերեկեն վերջ՝ 1935 թվականին: Եվ այդ օրեն Չարենց մնաց իմ խոհերուս մեջ:

Միշտ նպատակ ունեի գրել Չարենցի մասին: Սակայն չեմ գրած շարք մը պատճառներով: Առաջին որովհետև գրելիքս կըրնար սխալ հասկցվիլ և Չարենցը մատնել անել կացության կամ անոր պատճառով մտահոգություն, անձնական դժվարություն, թերևս, նույնիսկ դժբախտություն:

Ես կարող չիի մնան պատասխանատվություն մը կրել խղճիս վրա:

Ես կարող էի միայն տարվետարի աղոթել, որպեսզի Չարենց, ուր որ ալ ըլլա՛ իր ճակատագիրն ու բախտը շատ ծանր չկշռեն իրեն:

Խորապես գոհ էի, որ կարողացա հանդիպիլ իրեն ու, թեև, ինքը երբեք չխնդրեց ինձմե, որ չգրեմ իրեն, սակայն ես զգացի, որ այդ հետևանք էր ներքին արիության ու հպարտության, զգացի նաև, որ իր անկեղծ, ջերմ ու ազնվական վերաբերմունքը ինձի հանդեպ արտահայտությունն էր իր կատարյալ վստահության, որ ես կըլլամ զգույշ ու զուսպ:

Երկրորդ, չգրեցի Չարենցի մասին, որովհետև ան բանաստեղծ է, որուն բանաստեղծությունը գրված է հայերենով, որ ես չեմ կարողացած:

Երրորդ, չգրեցի, որովհետև ես Չարենցին հանդիպեցա երեք, թե չորս անգամ միայն:

Սակայն Չարենցի մասին կան որոշ բաներ, որ կարծես կարող եմ ըսել: Նախ, կվախեցան, որ չկրցա ցույց չտալ, թե առաջին իսկ վայրկյանին նկատելի էի, որ Չարենց հասակով շատ փոքր մարդ էր և շատ տղեղ: Ես վստահ եմ, որ Չարենց տեսավ, թե ես նկատեցի այս պարագան: Սակայն, նույնիսկ եթե տեսավ, հայտնի չըրավ ու բան մը չըսավ:

Սակայն կես րոպե իսկ չանցած Չարենցի

հասակը փոքր չէր այլևս... Անոր հասակը դարձավ կատարելապես անտեղի խնդիր մը, և փոխանակ տղեղ մարդ ըլլալու, ան դարձավ գեղեցկագույններեն մին: Անոր ծայրը ջերմ էր, և անոր աչքերը շիտակ էին, արթուն ու խելացի:

Փոքր մարմնով, խոշոր անձև գլխով և մեծ ու ծուռ թքով մարդ չէր Չարենց, այլ կենդանի անհատականություն մը, որու բնակավայրը՝ մարմինը, արկածով էր, ան էր, ինչ որ էր: Անկարող էի հպարտ չզգալ, որ իրեն հետ եմ: Եվ փոխադարձաբար ան զգացուց, որ հպարտ է, որ ինձի հետ է:

Ասով չեմ ուզեր լսել, որ մեր խոսակցությունը ջերմ տափակություններ կամ գիրար շնորհավորելե անդին չանցան: Ծիշտ հակառակը: Ըլլալով հայրենակցից, ըլլալով գրչի մարդ՝ մենք շուտով մեկ կողմ դրինք քաղաքավարական կանոնները և խոսեցանք այնպես, կարծես շատ հին բարեկամներ ըլլայինք, որոնք պատեհություն չեն ունեցած իրարու հանդիպելու:

Կարճ խոսքով, ես անմիջապես սիրեցի Չարենցը, բայց ինչ որ ավելի կարևոր է, ունեցա այն տպավորությունը, որ ան ճշմարտորեն մեծ մարդ է:

Շատ դժվար է բացատրել մարդկային մեծությունը, հաճախ մարդ կսխալի, երբ, մեր վեցերորդ զգայարանի վրա հիմնվելով, այսինչի կամ այնինչի մասին կարծիք կկազմե:

Կարծեմ, Չարենց ինձի մեծ թվեցավ, որովհետև իր եության մաս կը կազմեին որոշ ապշեցուցիչ առաքինություններ և քանի մը զվարճալի թերություններ:

Անոր հոգեկան անկախության դեմ կար աշխարհի տեսած մարդու ժպիտը, անոր սուր մտքին հետ կար այնպիսի մանկական հետաքրքրություն մը, որ կտանի միամտության, անոր չափազանց քնքուշ վարվելակերպին կողքին կար ծաղրական չարածճիություն մը, որ կարելի էր դյուրությամբ կոպտության տեղ դնել:

Սակայն երբեք կոպիտ չէր Չարենց: Սրամիտ էր, և իր սրամտության պաշտոնն էր հսկել ինքն իր վրա, որ փքուն չդառնա:

Արագ էր ամեն բանի մեջ, և անոր մեջ կար թե՛ կիրք, թե՛ վճռականություն. վճռականությունը ստեղծագործ մարդու մեջ, որուն ունեցած կիրքը ճշմարտության հանդեպ

եղծված ու խարդախված էր դեպքերու բերումով, որոնցմե խուսափիլ կարելի չէր:

Այս դեպքերը, ըստ երևույթին, պարտադիր էին. թեև իմաստուն, սակայն կարգադրություն մը, որ բարոյապես անհանգիստ կդարձնե մարդս:

Ես արդեն հանդիպել էի շարք մը ականավոր հայերու, որոնք շատ զգույշ էին ինձի հետ ունեցած իրենց խոսակցության ժամանակ: Օրինակ, ինձի համար շատ անմեղ հարցում մը կընեի հայերու մասին, և պատասխանը կըլար խուսափողական, զգույշ, անորոշ և նույնիսկ կասկածելի...

Չարենց, սակայն, գործ չունեց գուշկության հետ: Ան կըրեր ճշգրտորեն այն, ինչ որ կուզեր ըսել այդ վայրկյանին և որ խոսակցությունը կպահանջեր: Իսկ իր խոսքերուն մեջ կային հակասություններ, որոնք ցույց կուտային, թե Չարենցի հոգին ազատ էր տակավին և վճռած էր չկորսնցնել ազատությունը:

Նույն ստեղծ, սակայն, ան երբեմն բուրրովին արտառոց կամ անընդունելի բան մը կըրեր, բայց կօհժաղեր իր քթին տակեն ու կարծես ինքնիրենը բաներ մը կմոքմոքար:

Իր հայերենը կամ ոճը դժվար չէկավ ինձի, որովհետև կխոսեր զարմանալի պարզությամբ: Ոչ ալ իմ հայերենը դժվար եկավ իրեն. իրողությունը այն է, որ որևէ խոսք չկրկնեցի և ստիպված չէղա որևէ միտք երկրորդ անգամ բացատրելու:

Չարենց ինձի ըսավ.

- Դուն կգրես անգլերեն, այսուհանդերձ, դուն հայ գրող ես:

Ես համաձայն գտնվեցա ու նկատեցի, որ թեև ծանոթ չեմ իր գրություններուն, սակայն կկարծեմ, որ ինք, հակառակ որ հայերեն կգրե, այսուհանդերձ ու էապես համաշխարհային գրող է:

Չարենց պատասխանեց.

- Թերևս. կամ հուսանք, որ այդպես է, թեև ինքնին բավարար է նաև հայ գրող ըլլալը:

Այս ամենը վերհիշելով չեմ ուզեր ըսել, թե բառացի կերպով կուտամ այն, ինչ որ խոսեցանք Չարենցի հետ, ասկե 20 տարի առաջ: Իհարկե, բառացի չեմ հիշեր: Մեր խոսածի իմաստը կհիշեմ ու պիտի հիշեմ միշտ, բայց բառերը թեր են իմ հիշողութենա:


Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ. «Արվեստի սկիզբն ազատությունն է»

«Ինձ համար կա երկու ազգային գրող՝ Վիլյամ Սարոյան և Եղիշե Չարենց, իսկ Ալեքսանդր Թամանյանը չափանիշ է, հայ մարդու կատարյալ չափանիշ: Ես ուրախ ու հպարտ եմ, որ հայ եմ»:

Գրչի և վրձնի վարպետ Աղասի Այվազյանի համար ամենակարևորը հայրենիքում ապրելն է՝ կապույտ երկնքի տակ, առանց հոգեկան տառապանքի: «Հայրս երգրունձի դարբին էր: Մանկությունս ու պատանեկությունս անցել են Ախալցխայում: Շատ դժվար օրեր են ունեցել: Հայրս ամբողջ օրն աշխատում էր մի կտոր հաց վաստակելու համար»:

Տարիներ անց Աղասի Այվազյանը եկավ Հայաստան: Այստեղ նրան սպասում էին նոր դժվարություններ, հիասթափություններ ու ծանոթություններ: «Ցավոք, իմ կյանքում խանգարող մարդիկ շատ են եղել: Իմ հոգում կուտակված սպիները շատ խորն են: Ես փորձում եմ սպեղանի դնել ցավը մեղմացնելու համար, բայց անցյալը չի մոռացվում: Եղել են օրեր, երբ քաղցած եմ գիշերել, բայց դա ինձ է տվել: Բարեբախտաբար, եղել են մարդիկ, որոնք օգնության ձեռք են մեկնել: Յուրաքանչյուրիս մեջ էլ ապրում է նախանձը, բայց այն կարելի է փոքրացնել: Միայն միմյանց օգնելով կարելի է հասնել հաղթանակի»:

Կան գործեր, որոնք ստեղծվում են ոչ թե վարպետության շնորհիվ, այլ ներշնչանքի արտահայտություն են: «Իմ ստեղծագործական կյանքում կարևոր դեր է խաղում «եռանկյունի» վիպակը: Դեռ մանկուց իմ հիշողության մեջ տպավորվել է հորս դարբնոցը՝ եռանկյունում տեսքով փոքրիկ շինություն: Վիպակը գրել էմ շատ արագ մի քանի օրում: Ինձ ծանոթ ու հարազատ էր Սկրտիչների դամբնոցը, իսկ հերոսները զարմանալիորեն սիրելի ու



համակրելի: Վիպակում Հովիկի կերպարի մեջ դրել եմ իմ էությունը: Դա կարծես փոքրիկ ինքնակենսագրական լինի»:

Սարդը սխալական է: Մեզանից յուրաքանչյուրն էլ կյանքում կատարում է արարքներ, գործողություններ, որոնց համար հետագայում զղջում է: Իսկ եթե ժամանակին հասկանում ես կատարած սխալի մեծությունն ու այն կանխում, քեզ բարոյապես ավելի մաքուր ես զգում:

«Ապրում էի ծայրաստիճան աղքատության մեջ, երբ գրեցի «Խոսուն է Կոչկոչյանը» պիեսը (պիեսը գովերգում էր խորհրդային կյանքը): Ես ունեի շատ ընկերներ, որոնք մանաստիպ ձևով գումար էին վաստակում: Երբ պիեսն ընդունեցին ու պետք է բեմադրվեր Սուևոլուկյանի անվան թատրոնում, իմ մեջ կարծես ինչ-որ բան կտորվեց: Թվում էր, թե վաճառել եմ ինքս ինձ, իմ ամենաթանկ բանը՝ գրիչը: Սա իմ կյանքի ամենամեծ սխալն էր: Երջանիկ եմ,

որ այդ սխալը կանխեցի ու թույլ չտվեցի բեմադրել: Այլապես ինձ չէի ների, չէի կարողանա հայելու մեջ նայել ու չամաչել»:

Հաճախ երջանկությունն անցնում է մեր կողքով, իսկ մենք այն չենք նկատում: Յուրաքանչյուրը երջանկությունը յուրովի է հասկանում, սակայն մի բան փաստ է, յուրաքանչյուրն էլ ունեցել է կատարյալ, իսկական երջանկության հաճելի պահեր:

«Անհրաժեշտ է երկար ապրել՝ երջանկության իմաստը հասկանալու համար: Ես երջանկություն եմ փնտրում գրականության, նկարչության ու թատրոնի մեջ: Արժանացել եմ բազմաթիվ մրցանակների, պատվոգրերի, ՀՍՄՀ պետական մրցանակի առաջին դափնեկիրն եմ, սակայն դրանք ինձ երբևէ երջանկություն չեն բերել: Երբևէ չեմ ձգտել պաշտոնի և գիտեմ, որ այն ինձ չի երջանկացնի: Ինձ համար լիակատար երջանկությունն աշխատանքիս պահն է: Ես ամբողջովին ընկղմվում ու նվիրվում եմ իմ գործին: Շատ ուժեղ է իմ ստեղծագործական գրգիռը: Եթե մի օր այն հանգչի, ես կդժբախտանամ»:

Սերունդները փոխվում են, նրանց հետ փոխվում է նաև մտածելակերպը: «Ժամանակակից սերունդն ավելի լայն հնարավորություններ ունի ստեղծագործելու, իրեն արտահայտելու համար: Արվեստի սկիզբն ազատությունն է: Նախկինում արվեստը պատված էր սևով, այսօր այդ մթության մեջ մի փոքրիկ կրակ է առկայություն: Ես լավատես եմ ու համոզված եմ, որ սերունդների ջանքերի շնորհիվ այդ փոքրիկ կրակը կմեծանա, կլուսավորի ու կշերմացնի: Համոզված եմ, որ կունենանք նոր տաղանդներ՝ Թամանյաններ, Չարենցներ, Սարոյաններ, և դա կլինի մեր մեծ բարոյական հաղթանակը»:

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԳԵՂ ԵՑԻԿ ԿԻՆԸ

Արտաքին աշխարհը ցանկապատի ճեղքից էինք տեսնում: Ձորանոցը ներբակված էր քարե ցանկապատով: Մեր երիտասարդական արյունը կանգամ չուներ, վազում էր, որտեղ ճամփա կար ու նույնիսկ որտեղ ճամփա չկար... Դուրս արժենել էր ուզում մարմնից, շատրվանելով աջ ու ձախ, վե՛ր, վե՛ր ու վե՛ր...

Ձինվորական հրամանն էր միայն, որ խցանում էր անոթների բերանը, հանգցնում ներքին խլրտուքը, զսպում խենթ ու խելառ ավյունը... Սապոգների հոտը, մախորկայի առնական բուրմունքը, գորավարժություններից առաջացած թևատակի քրտինքի արգաստը, բամակայինների կարծրախոտությունը ճչում էին, ոռնում, պահանջում նրբություն, ճերմակ մաշկ, քնքուշ հայացք... Հեշտասիրության տրնքոցներով էր լցվում գորանոցը գիշերներով... Երագներն ընդամենը մի պատկեր էին հրամցնում՝ կնոջ մերկ մարմին, նրա բարեմանությունների մանրամասներ...

Ձորանոցային համալիրում հինգ հազար տղամարդ կար և մի պիսակերես կին: Կի-

նը հավաքարարն էր հրամանատարական առանձնաշենքի: Ոսկրտ էր կմախքի մամն, կուրծքը՝ ոսկորների վրա, քիթը հասնում էր ներքին շրթին, ատամնաշարը դուրս էր ցցված, երկայնականջ, ոտքերի ամենախոշոր մասերը ծնկներն էին, բայց նա կին էր, կի՛ն, է՛... կի՛ն...

Ամեն առավոտվա անվանականչին, երբ գորանոցի բակում շարք էին կանգնում հազարավոր բանակայիններ, դիմացի բարձրահարթակի վրա, հրամանատարների կողքին միշտ հայտնվում էր կինը, որի անունը մեզ համար ուղղակի Կին էր: Եվ հազարավոր հայացքներ սևեռվում էին նրա կողմը, հազարավոր սոված մայվածքներ գամվում էին անմատչելի տեսիլին... «Քու ցավը տանեմ», մրմնջում էին սեղմած շուրթերով բանակայիները, «ոսկորներդ ուտեմ», շշմջում էին նրանց փակ բերանները, «մարմինդ լիզեմ», արտաբերում էին լնդերին կպած նրանց լեզուները... Բոլորը պատրաստ էին ամուսնանալ նրա հետ, միայն թե հնարավորություն տրվեր շոշափել նրան, փաղաքել

կանացի մարմինը, սիրել նրան, բոլորը պատրաստ էին խենթ արարքների, միայն թե մարմինը դիպցնեն նրա մարմնին, հոտոտեն նրա ամեն ինչը... Այդ ի՛նչ անհասելի բաղձանք էր... Այդ ի՛նչ երագանք... Եվ ոչ ոք չէր նկատում նրա դեմքի անկանոնությունը, ոչ ոքի պետքը չէր, որ ոտքերը բարակ էին ու թավարծի, մի խոսքով՝ բավական էր, որ նա կին էր, կի՛ն... Միակ կինը գորանոցում...

Կինը իշխում էր ամբողջ գորանոցի վրա, նրա պլշած ժպտուն աչքերն էին մագնիսի հանգույն հավաքում բոլորին իր կողմը... Նրա ընտրությունը անսահման էր. հազարավորներ էին պատրաստ գլխակորույս քայլերի...

Ես նրանցից մեկն էի, թեպետ բանակը ինձ համար հեշտ կյանք էր ապահովել: Ծուլությունս գտել էր իր իսկական տեղը: Մտածելու կարիք չուներ... Սպասում էի հրամանի: «Քայլով մա՛րշ»՝ քայլում էի, «հետ դա՛րձ»՝ հետ էի դառնում, «հավասարում դեպի ա՛ջ»՝ հավասարվում էի դեպի աջ, «զգա՛ստ»՝ զգաստանում էի, «ճա՛շ»՝

գնում էի ճաշարան... Եվ այսպես ամեն գործողություն... Անելիքս հեշտանում էր նաև այն հանգամանքի շնորհիվ, որ ինձ մնում էր միայն հիշել առջևումս կանգնածի ծոճարանը: «Շարքի կանգնել» հրամանի ժամանակ ես փնտրում-գտնում էի իմ հարազատ ծոճարակը և կանգնում նրա հետևից. հեշտ ու հարմար, մտածել պետք չէր, նախածեղծության կարիք չկար... Ծոճարակի տիրոջ անունը Փառնավազ էր... Նրա ծոճարակը մեզ բարեկամացրեց, քանի որ տարածություններ ամենամոտիկ մարդը նա էր... Նա էլ էր սևեռվում Կնոջ կողմը, սակայն փորձում էր դա թաքուն անել, միայն ես էի նկատում, վասնզի Փառնավազի ծոճարակը աչքիս առջև էր և տիրոջ զգացմունքներն թուրք էլեկտրոն երևակվում էին նրա սինթիզի:

Ձորացրվելուց հետո արդեն Փառնավազի դեմքի հետ էի հաղորդակցվում: Եվ բարեկամացանք... Առաջին մեր հանդիպումը նրա տանը կայացավ: Փառնավազը, փողոցում ինձ տեսնելով, գորովասիրաբար մտաբերեց մեր բանակային օրերը և հրավիրեց իր տուն: Պետք է ասեմ, որ ինչքան էլ դժվար լինի գորանոցային կյանքը, կարոտով է հիշվում տղամարդկային համաբանությունը, քանզի ժուժկալ ու խիստ կենսակերպը ամրացնում է մարդկային շինվածամյութը, ոգեխառնության դարբնոց դառնում:

Եվ ես հյուրընկալվեցի Փառնավազի տանը: Մի փոքրիկ սենյակ էր Սարիթաղի վերին մասում... Նեղվածքը սկսվում էր արդեն մուտքից, ապա ավելի նեղանում, և սենյակը դիմավորում էր անձկությամբ:

Փառնավազը օդի դրեց սեղանին, տառեխ հանեց պահարանից ու մեղավոր ժպտաց.

- Բանակը ինձ սեյտոկա սիրել տվեց... Առանց դրան սեղան չեմ նստում...

- Եվ գրեչկա, - ավելացրեցի ես:

- Եվ բորչ, - շարունակեց Փառնավազը: Խնեցի՞նք օդին, կերանք սեյտոկան, հետո Փառնավազը ոտքի ելավ և սկսեց սենյակի մի պատից մյուսը գնալ-գալով քայլ խփել, դոփել հատակը ու երգել գորանոցային մեր խուժան-քայլերը. «Սոֆա՛, Սոֆիա Պավլովնա՛ ... Գատով վայու ժիգն ատդատ...»:

Այդ պահին դուռը բացվեց, և ներս մտավ... Կինը, մեր գորանոցի Կինը:

Երբ Փառնավազի կոկորդում մնաց, նա նայեց Կնոջը և շեշտակի նստեց աթոռին: Ձարմանքս մեծ էր: Նման անակնկալ դժվար էր երևակայել: Մեր գորանոցի հուռուքը՝ այստեղ, շարքային Փառնավազի տանը: Ձորանոցում Կինը մարմնական չէր, նա հավաքական ներկայացուցիչն էր էգի:

- Էլի՞ ես խնում... - առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, բերանը ծռելով արտաբերեց Կինը:

- Կինն է, - ներկայացրեց Փառնավազը և դառավ Կնոջը. - Ներս ես մտնում բարև ասա...

- Բարև, - թեթևակի իմ կողմը նայելով՝ շարտեց Կինը: Հետո նստեց կիսամաշ բազմոցին և ակնապիշ նայեց սեղանին:

- Նստելու տեղ չունես, հյուր ես կանչում... - ասաց նա:

- Արի՞... Բեզ համար էլ տեղ կճարվի... - կնոջ անպարկեշտ խոսքը չնկատելու տալով, առաջարկեց Փառնավազը:

- Կարգին բան չէ՞ս կարող առաջարկել... - Մեր սեղանը կարգին բան չէ՞...

- Էստղը կարգին բան չկա... Ո՛չ սեղանը, ո՛չ դու:

Փառնավազը նայեց ինձ, ինչ-որ բան էր ուզում ասել դառնաժպիտով, բայց գլուխը լուռ տարուբերեց: Հետո հայացքը մեխեց սեղանին, և շուրթերին կողպեք դրեց: Կինը ևս լուռ էր: Ծանր լռությունը հուշում էր ինձ, որ գնալու ժամանակն է: Բարձրացա տեղիցս, Փառնավազը սեղմեց ուսս՝ հետույքս նորեն իջեցնելով աթոռին:

- Նստի՛ր, - ասաց նա: - Մեր հանդիպումը սուրբ է...

- Լավ է՝ եկեղեցի գնաս... Իսկ դու սեյտոկա ես խժռում... - օղավորեց Կինը:

- Սուռու՛ւ, կնի՛կ... - ատամները կըրճտացնելով արտաբերեց Փառնավազը:

- Ի՞նչ սուս... Սեյտոկայից բացի ի՞նչ ունես տանը... Ասա, թող հյուրդ իմանա...

- Սու՛ս, սասցի...

Կինը աղմուկով բարձրացավ բազմոցից, վրայի ժակետը նստեց սենյակի անկյունը, հետո նորից նստեց և սկսեց հանել կոշիկները: Նրա ոտքերի հոտից Փառնավազը փակեց աչքերը, ասեց աչքերն էին զգալու ժախը: Ես նորից հետույքս բարձրացրի աթոռից:

- Նստի՛ր, - գոռաց Փառնավազը, բայց ես զգացի, որ «նստի՛ր»-ը ինձ էր վերաբերում, իսկ գոռոցը՝ Կնոջը:

- Կմքնի՛ մոմ ենք վառելու... Էլեկտրականություն չունենք... - գուլպաները հանելով՝ ավելի իմ կողմը խոսեց Կինը:

- Մոմի տակ քո դեմքը քիչ կերևա... - դառնությամբ, սակայն նենգաժպիտ արտաբերեց Փառնավազը:

Կինը ձեռքի գուլպան շարտեց ամուսնու վրա և սկսեց ուժգին հեկեկալ: Լալիս էր ու լացի ամեն բեկորը շարտում էր Փառնավազին:

- Տրյակա՛կ... Սալդաֆո՛ն... Սուռա՛կ... - հեծկլտոցի միջից արտաբերում էր Կինը:

Փառնավազը նայեց ինձ, հետո մոտեցավ Կնոջը և իր ձեռքի ափով ծածկեց նրա

բերանը: Փորձելով հեռացնել ամուսնու ձեռքը, այնուամենայնիվ շարունակում էր գորանոցային հայիոյանքներ դուրս մղել նրա մատների արանքից:

Իմ վիճակը վիճակ չէր: Անելիքս չգիտեի: Պիտի որ, երևի, միջամտեմ... Բայց ինչպե՞ս... Արցունքներով թրջված զգվանքաշարժ այս Կնոջ վրա գալիս-պատկերվում էր գորանոցի բարձրահարթակի վրա կանգնած, հազարավոր կախարդված զինվորների տարփանքը, աշխարհի ամենագեղեցիկ կինը... Անհաստատ փորձ արեցի մի կողմ քաշել Փառնավազի ձեռքը, և մի պահ Կնոջ հայիոյանքի հետ նաև նրա լրծունքը ցայնվեց դեմքիս:

Օգտվելով, որ բերանը ազատվեց, Կինը մի անձամոթ հայիոյանք հնարեց:

- Պինգվի՛ն... Աջ դա՛ա-արձ, պինգվի՛ն... Հետ դա՛աա-արձ, պինգվի՛ն...

Կարելի էր ծիծաղել, իհարկե... Բայց ծիծաղը ինքնամեսեմացնող երանգ պիտի ունենար... Եվ ես դուրս քաշեցի Փառնավազին:

- Կին է... Ներող կլինես...

- Տեսա՛ր... - իր անելանելի պահվածքն ու ճղճիմ պատկերը արդարացնելու համար հևալով խոնթխոնթաց Փառնավազը:

- Սովորական պատմություն է... - հավուր պատշաճի մխիթարեցի ես:

- Սովորական... Սովորական ոչինչ չկա աշխարհում...

- Դե, կենցաղ է... Ի՞նչ կանես...

- Ձորանոցում սովորական էր... Երբ նա ամենագեղեցիկ, ամենացանկալի էութունն էր համարվում...

- Ձորանոցի, - ծշտեցի ես:

- Ձորանոցի... իհարկե՛ գորանոցի... - մտախոհվեց Փառնավազը:

Մենք անպատակ քայլում էինք Սարիթաղի փողոցներով... Փառնավազը կանաց-կանաց հանդարտվում էր... Իմ կողմը նայել չէր կարողանում: Հասկանալի էր՝ նրա այլևս սառը ուղեղը ամաչում էր երածից:

- Ամեն ինչ հարաբերական է... - ասաց Փառնավազը: - Կինը մեր մեջ է... Սեզանից դուրս կին չկա... Ո՛չ գեղեցիկ, ո՛չ տգեղ, ո՛չ բարի, ո՛չ չար... Դրսում կին չկա... Ինքսին կինը ոչինչ է... Մեր ուղեղի արգանդից են նրանք հայտնվում...

- Բայց, միևնույն է, կինը հրաշք է... - ասացի ես: - Ձորանոցի կինը դրանցից մեկն էր... Գուցես ամենահրաշալիին...

Փառնավազի դեմքը բացվեց... Ինձ թվաց, թե նա ինձ գտնվում է գորանոցում, և հայացքը սևեռված է բարձրահարթակի վրայի Կնոջը:

2007թ. 9 փետրվարի
Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

23-րդ համարը

ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆ

Հելսինկիում մայիսի 12-ին կայանալիք «Եվրատեսիլ 2007» երգի մրցույթին Հայաստանում հանդես կգա 23-րդ համարի տակ: Մրցույթին մասնակցում են 46 երկրների ներկայացուցիչներ, որոնցից 14-ը, այդ թվում՝ նաև Հայաստանը՝ անմիջապես եզրափակիչ փուլին: Հիշեցնենք, որ «Եվրատեսիլ 2007»-ին Հայաստանը կներկայացնի Հայկոն՝ «Enytime you need» երգով:

Փարիզի «Լարնատան» հրատարակչությունն անցյալ տարի «Հինգ մայրցամաքի պոեզիա» մատենաշարով լույս է ընծայել «Սայաթ-Նովա, 18-րդ դարի բանաստեղծ, հայերեն խաղեր» («Sayat-Nova, poete du XVIIIe siecle, Odes armeniennes») երկվեզու ժողովածուն: Այն ընդգրկում է հայ միջնադարյան մեծամուկ աշուղ-բանաստեղծի 47 բանաստեղծությունները՝ բնագրով և ֆրանսերեն թարգմանություններով, որոնք կատարել են փարիզաբնակ ամուսիններ Էլիզաբեթ Սուրադյանը և Սերժ Վենտուրինին: Թարգմանիչները գիրքը նվիրել են «խորունկ կինոթեմադրիչ և մեծ սայաթ-նովյան Սերգեյ Փարաջանովի» հիշատակին: Գիրքը կազմված է առաջաբանից, վերջաբանից, ծանոթագրություններից, փոքր բառարանից և հատուկ անունների ցանկից: Ծնունդով երևանցի թարգմանչուհի և ուսուցչուհի Էլիզաբեթ Սուրադյանն ուսանել է Երևանի պետական համալսարանում և Սորբոնում: Ամուսինը՝ բանաստեղծ և գրականության դասախոս Սերժ Վենտուրինին, երեք գրքի հեղինակ է: Ծանապարհորդել է Լիբանանում, Մարոկկոյում, Ռուսաստանում, Հայաստանում և Լեհաստանում, ուսումնասիրել այդ երկրների գրականությունը: Նրա հաջորդ գիրքը նվիրված է լինելու Մարինա Ցվետաևային:

Արծվի ԲԱՆՉԻՆՅԱՆ

Գազիկ Անպոնյանը իր երգիծանքով



Ինչպես ազատվել բանակից

Ձինակոչային տարիքի երեք պատանի ինձ հարցրին ինչպե՞ս է հաջողվել ժամանակին ազատվել բանակից: Ծառայել չէի ուզում:

- Պատմեցի:
- Քսան տարի առաջ ինձ ու ընկերոջս կանչեցին զինկոմիսարիատ: Գնացինք: Ընկերոջս ազատվելը կասկած չէր հարուցում: Նա բազմաթիվ հիվանդություններ ուներ: Իսկ ես հաշտ էի երեք տարի անընդմեջ «աջ, ձախ, ետ, առաջ»-ին:
- Առաջին բժիշկը հարցրեց. «Ի՞նչ բողոք ունեք, երիտասարդ»:
- Ընկերս պատասխանեց.
- Որի՞ց սկսեմ, բժիշկ... Երիկամներս քար ու ավազ են արտադրում...
- Ամենքի բախտը չի բերում, տղա ջան: Քարուավազը հավաքիր՝ մի օր էլ կտեսնես պետք եկան... Հաջորդը...

- Մյուս բժշկի մոտ.
- Լյարդս տանջում է...
- Խելոք ծառայես՝ անվճար կհանենք, պա՞րզ է, հայոց բանակի անվեհեր զինվոր...

- Սրտաբանի մոտ.
- Սիրտս զարթուցիչի պես տկտկում է... մի քիչ երկար որ քայլում եմ, կանգնում է:
- Քեզ համար կպառկես ... սահմանում, լավ կլինի:

- Բայց, ախր, գլուխս հա պտտվում է...
- Ձինվորին գլուխ պետք չէ, զինվորը հրամանները պիտի պատշաճ կատարի...
- Բայց քունս հա տանում է...
- Թող թշնամիդ արթուն մնա, դու արխե-ին քնիր...
- Ես նատուրի գիժ եմ... ես ձեռքս հրացան չեմ բռնի...
- Գիշտ կանես: Լսել ենք, զենքը-զինամթերքը կհսով կրճատելու են...
- Ո՞նց թե... Բա որ թշնամին հարձակվի՞...
- Էդ ժամանակ էլ մեր տարածքը կկրճատենք...
- Բժիշկ, ձեզ բանակ տարե՞լ եմ... Ախր սիրտ չունեցողին ո՞նց բանակ կտանեն...
- Չենդ կտրիր, անպիտանի մեկը...
- Բժիշկ, դե որ անպիտան եմ, այ էս թղթի վրա քո ձեռքով գրի...
- Այո, դու անպիտան ես, բայց պիտանի անպիտան ես:
- Տղուն բանակ տարան:
- Անհույս մոտեցա առաջին բժշկին:
- Բժիշկ, ես մեր ցուլի պես առողջ եմ: Հոգեբույժն առաջինն արձագանքեց.
- Էդ գժին դեսը դրկեք...
- Էստեղ ոչ մի գիժ էլ չկա... եթե մեկն ուզում է ծառայել, ուրեմն գիժ է...
- Սրա սրտում հաստատ մի արատ կլինի, հալա դեսն արի...

- Հիմա՞ր եմ, որ գամ՝ մի բան մոգոնեք...
- Դրա լեղին ջանովը տված կլինի, - կասկած հայտնեց լարողաբանը:
- Չէ, դրա երիկամի քարն է շարժվում: Տղա, արի մոտս...
- Երևի դուք խոսքներդ մեկ եք արել, որ ինձ զրկեք հայրենիքին ծառայել... Հենց սկզբից ասեմ՝ ձեզ չի հաջողվի... Ես տանկիստ կդառնամ ու կիրականանա իմ վաղեմի երազանքը...
- Արա, դուք չե՞ք տեսնում, որ դա կապելու գիժ է, դեսը դրկեք, դեսը...
- Դե որ կապելու գիժ եմ, ռիսկ արեք՝ գրեք, տեսեք ձեր գլխին ի՞նչ օյին կգա... Ես կբողբեմ...
- Արի, տես ոնց եմ գրում... Հազար տարվա բժիշկներից բողոքողիս տեսեք... Տղերք, բոլորդ էլ գրեք, որ դա ծառայության համար պիտանի չի...
- Գրեցին, թուղթ ձեռքս տվեցին: Էսպես էլ ես ազատվեցի ծառայությունից:
- Ջահելները մինչև վերջ լսեցին, ուրախ հեռացան:
- Նրանց մեկ էլ տեսա հեռուստատեսությամբ: Երեքով միահամուռ զոչում էին. «Մենք կծառայենք հայրենիքին... Մենք տանկիստ ենք դառնալու...»:
- Դրանից հետո նրանց երկու տարի չտեսա... Ուղիղ երկու տարի:

Մարերում

Մի ծերունի չիբուխը բերնին, մահակը՝ ոտքերի արանքում, արևկող է անում:

Մոտենում են հեռուստատեսության աշխատակիցները:

Լր.- Բարի լույս, պապի:
Պապի. Բարին ձեզ հետ, բալեք... Ես չուլերում ի՞նչ եք շինում:

Լր.- Եկել ենք հարցազրույց անենք քո հետ...

Պ.- Արեք...

Լր.- Լսել ենք՝ 100 տարեկան ես, հա՞, պապի...

- Ես էլ եմ լսել:
- Երևի կնիկը լավն ա եղել, դրա համար ես երկար ապրում: Քեզ շա՞տ ա օգնել նա:
- Հա, օգնել ա... շուտ մեռավ...
- Պապի, պռոշներդ իրար են կպչո՞ւմ...
- Կպատահի, խաշի վրիցը նոր վեր կացա:

- Դու մահից չե՞ս վախում, որ ծխում ես:
- Բա ի՞նչ եմ անում, որ չեմ վախում... Եթե չծխեմ, ախր, մեռնիլ չեմ, է՛...
- Պապի, ի՞նչ ես անում ազատ ժամանակ:
- Քոչարի եմ պարում, լեզգիկա եմ պարում ազատ ժամանակ... արև-ամծրակի տակ, գելուգազանի հետ...
- Հիվանդացած կա՞ս:
- Մի անգամ... մի դափիլ փռշտացի: Հա, մի օր էլ աջու ականջս սզու տվեց:
- Տարիքից կլի, պապի, վեջդ մի գցի:
- Բալա, ուզում ես ասես՝ էս մի ականջս ես մեկիցը ջախել ա՞...

- Քաղաքում եղած կա՞ս, պապի:
- Մի գիլի տարի ես չուլերը իրեք տղա էկան... Իրեք օր մնացին իրեք ոչխար կերան: Մի օր էլ սրանց հեռախոսի վրա զանգ եկավ ու՞ր եք, արա... Սրանք էլ թե ընտրողների հետ հանդիպումներ ենք կազմակերպում... 200 ընտրող ենք գտել: Ոչխարներս հաշվեցի, տեհա՝ ուղիղ 200-ն եմ ես էլ հետը... Մի ամիս եղը էլի եղ եկան, թե՛ պապի, հագրվի, ընտրությունների ենք գնում... Բա էն լա՞վ էր, որ կրկնում էիր՝ ԵՄ ՄԵՐ ԳԱՆՈՒՄՏԻՉԻՆ ՔՅՈՐՓՈՒՑ ԵՄ ՃԱՆԱՉՈՒՄ: Ասի՞ տղերք, բա ոչխարս ո՞ւմ պահ տամ՝ գիլի՞ն, թե՛ արջերին... Կերջը, գլուխներդ չցավացնես, ոչխարը առաջներուս արհնք, եկանք քաղաք՝ Գալուստիչին ընտրեցինք-պրծանք... 200-ն էլ մի մարդու մնամ Գալուստիչին ընտրեցին...
- Էլ քաղաքում չե՞ս եղել...
- Ջահել տղա էի, պապիս բերի բժշկի... Իզուր էլ բերի, ոչ մի բան էլա չհասկացան ձեր բժիշկները... Այսինքն պապիս ա հարցնում, թե ինչն ա ցավում... Բա արե ոչխարին նայեմ, չե՞մ ասի, թե ինչն ա ցավում...
- Բա չհարցնե՞ր...
- Ի՞նչը հարցներ, աղա, մեր ցեղում խաբեբա չի եղել... Պապս որ ասում ա ցավում ա, ուրեմն ցավում ա... Լավ էր, ցավը ոնց սկսել էր, էնպես էլ անցավ... Էդ էլ ձեր քաղաքը:
- Քաղաքի ի՞նչը թեզ դուր չեկավ, պապի...
- Ոչ մի բանը: Սաղ օրը ման եկանք՝ մի բարև տվող չեղավ: Ոչխարի խորոված ուզինք, բերին 13 տարեկան ոչխարի միս տվին... Պապիս վերջին ատամն էր ժամանակ ընկավ:

- Կանցեցի դրան, ասում եմ, տղա ջան, որ ոչխարդ տարիքով էր, խի՞ պապիներից տվիր... Ասում ա՝ իմ ոչխարը հեջ էլ պառավ չէր, հագրվ 13 տարեկան կլիներ: Չեզանից հո ջախե՛լ է... Պապս չիանքերեց, չոնքալը գլխին կտրեց... Էդ էլ պրծանք... Միլիցու շենքի առաջին գնում-գալիս եմ, մեկ էլ մի կնիկ մոտեցավ, թե՛ փող ունե՞ս, գնանք մեր տուն: Քչերվա մի վախտը մին էլ տեսնամ ես կնիկը ըղաքիս տկտրվում ա... Դանչաք արի՛ տեհ բան չանի, էլավ ոչ... Քչերվա կիսին թողի-փախա... Էդ տեսակ կնանիք շա՞տ կան, թե՛ էդ մինն էր...
- Էլի կլինեն: Էդտեսակները մարմնավաճառ են կոչվում:
- Յա, կոչում էլ ունե՞ն... Բա խի՞ դրանցից մի քանիսին հետներուդ չբերեցիք... Առաջիս էսպես կշարեմ ու, իմանում ես, հերթով, հա, հերթով, թուքումուր կանեն:
- Այս պահին հեռվից հայիոյանքի ձայներ են լսվում:
- Չայն.** - Չեր հեռն եմ անիծել, ձեզ կախել ա պետք, կախել...
- Պապի, ես ո՞վ ա, դեսն ա գալիս, բա ո՞ր... Մեծ ախպերս ա, բալա, իրնգորտանց հետ էլի լակել ա... Վախալ մի, բան չի անի, էսա հերս, տանն ա, վեր կկենա՝ հարցերը կլուծի:
- Դե լավ, պապի, մենք գնանք, ուշ ա...
- Գնացեք, բարին ձեզ հետ, բայց մնել որ գաք, էդ փչացած կնաննց մոռանաք ոռոջչչ... հետներդ մի խոխտ բերեք... Ոի հա, այ անտեր ոչխար... Թոնքլան, Թոպուզ, հասեք, զրցով ընկա՝ ոչխարը կտրկան էլավ...

ՎԵՐԱՑՐԵՔ ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԽԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքահայերի անձնանունների խեղագրությունը մարդու իրավունքների խնդիր է

Մոտ մեկ ամիս առաջ, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (այսուհետ՝ ՀՀ ՈԱՎ) պետ, ոստիկանության գնդապետ տիկ. Ալվինա Ջաքարյանը իր տված մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձել է սփյուռքահայերին տրվող կացության հատուկ կարգավիճակի (այսուհետ՝ ԿՀԿ) փաստաթղթերում նրանց անձնանունների գրելաձևի խնդրին:

Ինչպես հայտնի է, այս խեղագրությունը հարուցել է և շարունակում է հարուցել այդ փաստաթղթերն ստացած համարյա բոլոր սփյուռքահայերի խոր վրդովմունքը: Այս մասին հրապարակումներ են եղել հայրենական և սփյուռքահայ մամուլում: Այնուհանդերձ, խեղագրությունը շարունակվում է... հարվածային տեմպերով: «Շնորհիվ» ՀՀ պանծալի ոստիկանության, մասնավորապես նրա հիշյալ վարչության, հիանալիորեն լուծվել է հայերենի ուղղագրության միասնականացման խնդիրը: Մերոպյան (դասական) և արեոյանական (սովետական) ուղղագրության կողքին երևան է եկել մի «ուղղագրություն», որին մենք մկրտում ենք «ոստիկանական» բառով: Այլ կերպ կարելի է չէ կոչել «Գեորգ»-«Գևորգ»-ի փոխարինումը «Կևորկ»-ով, «Տիգրան»-ի փոխարինումը «Դիկրան»-ով, «Կարապետ»-ը՝ «Գարաբեդ»-ով, «Ժան»-ը՝ «ժեան»-ով, «Ծովիկ»-ը՝ «Դգովիգ»-ով (դգով-փչող ոստիկան-լեզվաբանների թեթև ձեռքով, հնարավոր է որ մի օր էլ ունենանք «Դգովիկ»...), «Ժակ»-ը՝ ... «Ժագվվես»-ով ևն. ևն: Ազգավախյալ տիկին Ջաքարյանը իր հիշյալ ասուլիսի ժամանակ ոգի ի բռնի պաշտպանել է իր ղեկավարած վարչության տված սխալ անունները: Ավելին, նա արտահայտել է մտքեր, որոնք ցանկանում ենք պարզել այստեղ և հայտնել մեր կարծիքը դրանց նկատմամբ: Հարմար ենք գտնում դա անել կետերով:

1. Տիկ. Ջաքարյանն ասել է, թե սփյուռքահայերի «ոստիկանական» փաստաթղթերի անունների համար «հինք են ծառայում նրանց քաղաքացիության երկրի մարմինների տված անձնագրերի տվյալները» և թե իրենք «իրավունք չունեն դրանք որևէ փոփոխության ենթարկել»: Տիկինը նույնիսկ վրդովվել է. «Իսկ ինչո՞ւ այդ անձերը իրենց երկրում անձնագիր ստանալուց չեն պահանջում, որ իրենց անունը ճիշտ գրվի: Համակերպվում են անձնատարբեր սխալների հետ ու փաստի առաջ ենք կանգնում»:

Մի կողմ թողնենք այն, որ ԿՀԿ ստացող սփյուռքահայերի մեծագույն մասը իրենց «երկիրը» համարում են ոչ թե իրենց բնակության և/կամ քաղաքացիության երկիրը, այլ՝ հենց Հայաստանի Հանրապետությունը, ավելի ճիշտ՝ Հայաստան-Հայկական բարձրավանդակը: Նրանց համար «երկիր» հասկացությունը նույնացվում է «Հայրենիք» հասկացության հետ: Սա կարող է «մանրուք», ամբողջավարտություն կամ էժան հայրենասիրություն թվալ, սակայն, հենց ՀՀ իշխանություններն են (նույնիսկ՝ ՀՀ նախագահը) այդ քարոզ անում, հատկապես երբ հասնում է կոլդ կրեյտի ժամանակը (ինչպես վերջերս՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հերթական հեռուստամարաթոնի նախօրյակին և ընթացքում):

ա. Ի՞նչ անենք, որ պետություններից շատերի պետական լեզվի այբուբենում չկան հայոց այբուբենի հնչյուններին համապատասխանող բոլոր տառերը և հայերենի բոլոր հնչյունները: Մյուս կողմից, տվյալ պետությունները, իրենց քաղաքացիների անունները փաստաթղթերում լատինատառ ձևակերպելիս, ելնում են իրենց պետական լեզվով (և ոչ թե հայերենում) գրելաձևից: Օրինակ, արաբերենը չունի «վ», «ե», «է» տառերը, ռուսերենը՝ «հ» տառը և այլն, հետևաբար, «Վահե» անունը արաբերենով գրվելու է կամ «Ուահա», կամ էլ «Ուահի», իսկ «Հովհաննես»-ը ռուսերենում՝ «Օգանես»: Այստեղից էլ, լատինատառ դառնում են «Waha» կամ «Wahi»: «Oganes(s)»: Բայց հո ԱՎԿ-ի աշխատակիցները պետք է իմանան, չէ՞, որ անձի անունը հայերենով ոչ թե «Ուահա» կամ «Ուահի» և «Օգանես» է, այլ՝ «Վահե», «Հովհաննես»: Այդ անունների տեղ սփյուռքահայերը ցանկանում են գրեն իրենց հայրենական պետության տված փաստաթղթերում ճիշտ կոչվել, մասնավոր, որ ԿՀԿ փաստաթղթերը օտար պետությունները չեն ճանաչում: Ինչո՞ւ այլ պետություններ մեկնում են իրենց պետական լեզվից (և շատ էլ ճիշտ են անում, հո ՀՀ չեն, ուր նույնիսկ պետական մարմիններում խայտառակ վիճակում է հայտնվել պետական միակ լեզուն՝ ամենաթողության պայմաններում), իսկ ՀՀ պետական մարմինները մեկնում են ... օտար պետությունների լեզուներից (մաքուր հայերեն՝ «Վահե», արաբական գրությամբ՝ «Ուահի» կամ «Ուահա», վերջինիս հիման վրա՝ ՀՀ «ոստիկանական հայերենով»՝ նորից «Ուահի» կամ

«Ուահա»): Մեր անխախտ հանգամանք, ՀՀ-ում պետք է ամեն ինչի հիմքերի հիմքում դրված լինի հայոց լեզուն՝ անմրցակից կերպով: Այնպես, այս տարածքը կարելի է ամեն ինչ կոչել, բայց ոչ՝ Հայաստան: Տիկ. Ջաքարյանի «տրամաբանությամբ», որպեսզի իր ղեկավարած մարմինը «Ժան»-ը գրի հենց «Ժան» և ոչ թե «ժեան», «Ժակ»-ը՝ «Ժակ» և ոչ թե «Ժագվվես» ևն., պահանջում է, որ այդպիսի անուններ ունեցող սփյուռքահայերը կոլդ տան իրենց պետություններում: Այ քեզ բան: Հո Ֆրանսիացիք, լիբանանցիք և այլք այնքան հիմար չեն, որպեսզի ինչ-որ հայանուն ժաների, ժակերի ևն.ի համար փոխեն այդ անունների ֆրանսերեն գրելաձևը և դրանք գրեն Jan, Jak, ևն. տեսքով, ինչ է թե ՀՀ-ում ինչ-որ «գրագետ» ոստիկաններ բարեհաճեն հայերենով ճիշտ գրել այդ անունները՝ «Ժան», «Ժակ», ևն.: Ֆրանսիացու (նկատի ունենք ինքն իրեն ու իր մայր լեզուն հարգողին) համար, «Ժակ»-ը գրվում է միայն և միայն «Jacques»-ը ձևով, «Ժան»-ը՝ «Jean», «Շարլ»-ը՝ «Charles» ևն.: Եվ ոչ մեկ սփյուռքահայ կամ այլ մարդ չի կարող որևէ կերպ ստիպել Ֆրանսիայի (Լիբանանի և այլ երկրների) համապատասխան պետական մարմիններին այս գրելաձևից տարբեր կերպ գրել (Ֆրանսիայում լեզվի պաշտպանության մասին օրենքը հիանալիորեն գործում է, Ֆրանսիան հո ՀՀ-ը չէ, ուր Լեզվի պետական տեսչությունը միշտ էլ պահանջում քնած է և նրա պետը միայն նվճվում է հաստիքների ու բյուջետային հատկացումների սակավությունից, հոգն էլ չէ ոստիկանական խեղագրությունը՝ բազմաթիվ հրապարակումներից հետո նույնիսկ...): Այս առթիվ հարց տանք տիկ. Ջաքարյանին: Ինչպես հայտնի է, Շարլ Ազնավուրը արժանացել է ՀՀ քաղաքացիության, հետևաբար, ենթադրում ենք, նրան տրվել է ՀՀ քաղաքացիության փաստաթուղթ: Իսկ ինչպե՞ս է գրվել աշխարհահռչակ երգչի հայերեն անձնանունը՝ «Շա՛րլ», «Շարլե՛ս», թե՛ մի գուցե «Սիարլես»: Բայց չէ՞ որ նրա անունը ֆրանսերենում (ֆրանսիական անձնագրում) գրվում է «Charles» ձևով: Եթե Ազնավուրի անունը հայկական իր հայրենական պետության անձնագրում Շարլես կամ Սիարլես է, դա արդեն խայտառակություն է, իսկ եթե ճիշտ ձևով՝ Շարլ, այդ դեպքում տրամաբանական հարց է ծագում. ի՞նչ մեղք ունեն «Շարլ» անունը կրող մյուս սփյուռքահայերը, որ ՀՀ ՈԱՎ-ը նրանց տալիս է ոչ «Շարլ» անունով անձնագրեր: Ի՞նչ է, մեկին կարելի է, մյուսներին չի՞ կարելի: Ո՞ր են այստեղ տրամաբանությունն ու արդարությունը, մարդկանց հավասարության ՀՀ սահմանադրական դրույթը: Նույն տրամաբանությամբ, ինչո՞ւ Jacques Chirak-ը հայերենում գրվում է «ժակ Շիրակ», բայց, օրինակ, խեղճ ոմն Jacques Donabedian-ը իր հայրենական պետության տված փաստաթղթում դառնում է «Ժագվվես Դոնաբեդյան»... Սրանից հետո դե արի ապացուցիր, որ ֆրանսերենով «Jacques Donabedian», արևմտահայերեն-դասական ուղղագրությամբ՝ «ժաք Տոնապետան» անունով անձը նաև «Ժագվվես Դոնաբեդյան»-ն է: Նույն անձը երկատվում-եռատվում է հոգեբանորեն, այսինքն՝ հայտնվում է հոգեբույժի այցելելու կարիքի մեջ: Սա չափազանց լուրջ խնդիր է, իսկ ՀՀ ՈԱՎ-ն շատ հեշտոտությամբ, ՀՀ ոստիկանությանը պատշաճող հանրահայտ «բարեկրթությամբ» է լուծել խնդիրը. գլխացավ ունենալուց հետո կտրում և ազատվում են ցավից, մենք էլ քեզանից ենք ազատվում: Մի բան էլ շնորհակալ պիտի լինես մեզ, որ քեզ փրկեցինք այդ ցավից... գ. Տիկ. Ջաքարյանը մեղադրում է ԿՀԿ դիմում կատարող սփյուռքահայերին, որ նրանք «համակերպվում են ամենատարբեր սխալների հետ» և իր վարչությանը ավելորդ գլխացավանք պատճառում: Նախ, ազնվափայլ տիկինը որտեղի՞ց գիտի, որ այդ մարդիկ համակերպվում են ոչխարի նման: Սակայն, այդ մարդիկ չեն կարող ստիպել (դրա օրինական իրավունքն էլ չունեն), որ արաբը «Վահե» անունը գրի արաբերենով և լատինատառ «Վահե», ռուսը՝ «Հովհաննես»-ը՝ կյուրերդատառ և լատինատառ՝ «Հովհաննես»... Տիկ. Ջաքարյանը ճիշտ կլիներ միայն այն դեպքում, եթե տվյալ երկրի պետական լեզվի այբուբենում ունենար նման հնարավորություն, այդ պետության անձնագիր տվող գերատեսչության աշխատակիցը թույլ տար անվանասխալ, իսկ խնդրո առարկա սփյուռքահայը համակերպվեր: Այդուհանդերձ, այս դեպքում ևս տիկ. Ջաքարյանն ու իր նման մտածողները բացարձակապես ճիշտ չեն: Քիչ չեն դեպքով և անձի կամքին հակառակ, խեղաթուրում են նրա անուն-ազանունը կամ ամբողջովին նոր անուն պարտադրում նրան: Այդպի-

13

սի երկու-երեք հիանալի հարևաններ ունենք՝ թուրքերն ու վրացիները, որոնցից երկրորդը Սահակյաններին դարձրել և դարձնում է Սահակյանի, Գևորգյաններին՝ Գեորգյան ձև են, իսկ առաջինը՝ Անդրանիկ անձնանունը՝ էնթեր, Մարգարյանը՝ Մարգարողյու են: Այսպիսի պարտադրյալ խեղաթյուրված անուն-ազգանուն ունեցողները իրավունք չունեն ԶԳ ԿԳԿ ստանալիս վերականգնելու իրենց իսկական, հայահունչ անունները: Մեր կարծիքով՝ միանշանակորեն ունեն: Թուրքը իր թուրքությունը անուն է (և ճիշտ է անուն, ի վերջո՝ թուրքը թուրք է), վրացին՝ իր վրացիությունը, բորենին՝ իր բորենիությունը... Մենք ենք երկի միակ «հարիֆ»-ը. մենք էլ մեր հայությունն անելու փոխարեն վավերացնում ենք թուրքի արած թուրքությունը, վրացու՝ վրացիությունը, ռուսի՝ ռուսությունը են: Են: Սա ամոթ չէ՝ միթե, մահավանդ որ վերջին տարիներին ԶԳ կառավարությունը ղեկավարում է մտղեխյան-ցեղակրոն վարչապետ Անթրանիգ Մարկարյանը (եթե նա սփյուռքահայ լիներ, այսպիսի մի անվան նրան կարժանացներ ԱՎԿ-ը), իսկ իշխանական լծակների հիմնական մասին տիրել են ամեն ռուպե ազգային արժեքներից բարբառողները՝ իրենք իրենց ազգայնական հռչակած ԶԳԴ-ն և ցեղակրոն-պահպանողական հռչակած ԶԳԿ-ն: Այս երևույթի գոյությունն իսկ նրանց իշխանության օրերին պարզապես խայտառակություն է: Մյուս կողմից, տիկ. Չաքարյանն ու ընկ. պատկերացումն են այսպիսի մի իրադրություն. «օղյու» ազգանունով տրված ԿԳԿ-ով մեկի երեխան խաղում է խաղահրապարակում, գնում է դպրոց են. և նրա հասակակիցները իմանում են նրա «օղյու» լինելը: Ի՞նչ է լինելու խեղճ երեխայի հոգեբանության հետ, երբ նրան ձեռ են առնելու «թուրք» կանչելով. թե երեխան և թե նրա ծնողները զգվելու են ԶԳ-ից էլ, հայությունից էլ, ապրելու են ամենամեծ ողբերգությունը՝ սեփական հայրենիքում օտարումը հայրենիքից և ազգային ինքնությունից... համարելով արտագաղթողների բանակը: Սա՞ են ցանկանում ԱՎԿ-ի աշխատակիցները:

2. Տիկին Չաքարյանը հայտնում է, թե չեն կարող «որևէ բան փոխել, որպեսզի ավելորդ բարդությունների ու քաշքշուկների առաջ չկանգնեցնենք նրանց (ԿԳԿ ստացող սփյուռքահայերին)»: Բայց, տիկ. Չաքարյանն ու նրա ստորադասները համարյա բոլորին արդեն կանգնեցրել են նման վիճակներում՝ այն էլ հենց ԶԳ-ում (կրկնենք՝ ԶԳ + ԱԳԳ սահմաններից դուրս ԶԳ ԿԳԿ փաստաթուղթը չի ճանաչվում): Օրինակ, հենց իմ պարագան. 1996թ. մարտին առաջին անգամ ԿԳԿ ստացել են (ի դեպ՝ հենց տիկ. Չաքարյանի ձեռքից, որն այս ժամանակ էլ ղեկավարում էր նույն վարչությունը) Գևորգ Յագիչյան անուն-ազգանունով, իսկ տասը տարի հետո նույն փաստաթուղթը ստացա... Կևորկ Յագեջյան ձևով: Իրավական տեսակետից ես այլևս նույն մարդը չեմ, և առաջին անվանաձևերով բոլոր իրավահարաբերություններն անիմաստ են դառնում (օրինակ՝ Քասախ գյուղում իմ հողի սեփականատերը այլևս ես՝ ըստ ԱՎԿ-ի Կևորկ Յագեջյանս չեմ, այլ՝ «անգո» դարձած Գևորգ Յագիչյանը): Դիմել են իրավաբանների, որոնք հարցի լուծումը տեսնում են միայն և միայն դատարանում: Ի՞նչ է, գործ ու բան չունենք, որպեսզի ԶԳ Ո ԱՎԿ աշխատակիցների ամնիտ արարքների համար դատարանների դռներն ընկնեն: Մեկ այլ հարց է ծագում. կամ առաջին անվանաձևն էր սխալ, կամ նորը, երրորդ տարբերակ չի կարող լինել այստեղ: Եթե առաջինն էր ճիշտ, ինչո՞ւ այն փոխեց ԱՎԿ-ը ինքնակամ կերպով: Իսկ եթե դա սխալ էր, ո՞վ է կրում պատասխանատվություն այն բանի համար, որ ես տասը տարի կրել էմ սխալ անունով փաստաթուղթ: Պատասխանը միանշանակ է՝ հենց ԱՎԿ-ը: Բայց միթե՞ նա պատասխանատվություն է կրում: Քավ լիցի՝ անենաթողության այս երկրում նման հարցադրումն իսկ հիմարություն կլիներ մեզ համար: Մյուս կողմից, մի անգամ էլ կրկնենք. մարդը հոգեբանորեն նույնանում է իր ծննդից քիչ անց իրեն տրված անվան հետ, և առանց նրա ցանկությանը, ոչ ոք, շեշտում են՝ ոչ ոք իրավունք չունի փոխել նրա անունը: Դա մարդու իրավունքների ոտնահարում է: Տիկին Ավինա Չաքարյանի դուրը կզայն է թե նրա անունը փաստաթղթերում նշեին այլ կերպ, ասենք՝ Ալբինա, Մավլինա... Իհարկե ոչ: Բայց ինչո՞ւ է նրա ղեկավարած մարմինը փոխում մարդկանց անունների գրելաձևերը, նույն է՝ անունները, հոգեբանական ահեղի հարված հասցնում նրանց: Ո՞ր իրավունքով: Տիկ. Չաքարյանը այս հարցումին պատասխանել է՝ «օրենքով ենք դա անում»: Այս պարագան չի կարող արդարացում լինել սփյուռքահայերի անձնանունների հետ ըստ կամս ձեռնմածության համար, քանի որ, միևնույն է՝ օրենքի ոգին ընդհանրապես չկա այստեղ, այլ՝ վերցվել է ընդամենը օրենքի տառը և ուրիշ ոչինչ: Իսկ նման ձևով մոտեցումը օրենքներին շատ ավելի վատ է, քան օրենքը չկիրառելը:

Հայտնենք, որ ԱՎԿ-ի տված ԿԳԿ փաստաթղթերում տրամաբա-

նություն չկա նաև լատինական տառերի հայկականով համապատասխանեցումներում: Օրինակ, «Գրիգոր»-ը (լատինատառ՝ Krikor) ըստ արևմտահայերենի հնչյունաբանության) մի դեպքում դառնում է «Կրիկոր», մեկ այլ դեպքում՝ «Քրիգոր», միևնույն թե արևելահայերենում և թե արևմտահայերենում ճիշտ գրելաձևը «Գրիգոր»-ն է: Չէինք իմանում, թե հրաշալի լեզվագետներ ունենք ԶԳ ոստիկանությունում, որոնց նմանը աշխարհը չունի: Վերջիններիս խելքի փչած ժամանակ, հայկական «Գագիկ» անուն կրողները, նման կամայականության դեպքում, կարող են հայտնվել ... անհարմար վիճակում (իմ բարեկամ, ԶԳ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ Գագիկ Գագյանի բախտը իսկապես որ շատ բերել է, որ ... սփյուռքահայ չի ծնվել և ԿԳԿ փաստաթղթի համար ԶԳ Ո ԱՎԿ կամ ԶԳ արտասահմանյան հյուպատոսական բաժին չի դիմել:

3. Տիկ. Չաքարյանը հայտնում է, թե ԱՎԿ-ում անձնանունների թարգմանությունը «կատարվում է ավտոմատ ծրագրով»: Սա ինձ հիշեցրեց Հայրենիք-Սփյուռք երկրորդ համագումարի փաստաթղթերից մեկը, բազմացված հազարավոր օրինակով: Դա հեղինակվել է անգլերենով (պատկերացումն է եք, ԶԳ արտոգործախարարությունում թքել են ԶԳ սահմանադրության 12-րդ հոդվածի և «Լեզվի մասին» ԶԳ օրենքի վրա) և թարգմանության համար տվել համակարգչային ավտոմատ թարգմանչի և չեն էլ բարեհաճել գոնե մի անգամ ընթերցել համակարգչի «թարգմանածը» (խեղճերը շատ են զբաղված... համակարգչային խաղերով): Եվ ի՞նչ. հարյուրավոր սխալներ, օտարաբանություններ... Օրինակ, «Օդի տուրք»-ը դարձել էր, ոչ ավել ոչ պակաս, «օդի թուրք»: Ընդհանրապես լատինացված է լալ, որովհետև, նման խնթացքով, ԶԳ-ը որպես հայկական պետություն անխուսափելիորեն կգնա կործանման: Նույն «տրամաբանությամբ» էլ առաջնորդվում են ԶԳ Ո ԱՎԿ-ում: Մի՞թե դժվար է օրական ընդամենը 10-15 ԿԳԿ ձևակերպող ԱՎԿ-ում թարգմանությունը կատարել ոչ թե ավտոմատ ծրագրով, այլ՝ առանց համակարգչի միջամտության, ընդամենը հայերենի մեկ լեզվագետի ԱՎԿ ընդգրկումով: Ի վերջո, յուրաքանչյուր ԿԳԿ-ի համար գանձվում է 150 հազար դրամ, այսինքն՝ աշխատանքային յուրաքանչյուր օրում պետությունը մուտք է լինում 1.500.000-2.250.000 (ըստ տիկ. Չաքարյանի, այս տարվա առաջին 9 ամիսներին տրվել է 2276 ԿԳԿ փաստաթուղթ, այսինքն՝ մուտք է եղել մոտ 700 հազար ամ. դոլար): Հնարավոր չէ՞ միթե նրա չնչին մի գումարը հատկացնել խելքը գլխին մի լեզվագետի, որպեսզի այս խայտառակությունը բացառվի: Նույնիսկ եթե դա չլինի, ընդամենը 40-50 անձնանուն «թարգմանելը» (դա էլ չհասկացանք. հայկական անունը ինչպե՞ս կարելի է թարգմանել... հայերենի) շա՞տ է դժվար ԱՎԿ-ի մեր «գերզբաղ» աշխատակիցների համար: Բայց ոչ, ի՞նչ ենք ասում: Դա ևս բացառվում է ըստ տիկ. Չաքարյանի, քանի որ այդ դեպքում էլ «ծրագրային գործողություն է կատարվելու, որը տրամադրել է ԶԳ ԳԱԱ լեզվի ինստիտուտը»: Մի խոսքով, մեղքի մի բաժին էլ զգվել է սույն գիտական հիմնարկի վրա՝ քողարկելու համար ԱՎԿ-ի սեփական... անգրագիտությունը և ծածկելու համար գործված ավերը փաստաթղթերում և մարդկանց հոգիներում: Լեզվի ինստիտուտի ո՞ր աշխատակիցը «խաչատուր»-ը կզերե «խաչադուր», «ժամ»-ը՝ «ժեամ» են: Դրա համար, նրան դուրս կշարտեին ինստիտուտի... պատուհանից:

4. Իր մանուկի ասուլիսում, տիկ. Չաքարյանը դժգոհում է, թե անձնագրեր ձևակերպողները «երիտասարդ գրագետ մասնագետներ են, մրցույթով անցած և 20 հազար դրամով չեն կարող գալ առավելից մինչև երեքը հատ-հատ անձնագրի տպագրել»: Նախ եթե «գրագետ»-ներն են լեզվական այսպիսի, կներեք արտահայտության համար, աղբ արտադրում, «անգրագետ»-ները ինչ էին անելու... Երկրորդ՝ մեր հարկատուներին խնդիր չէ, որ այդ «մասնագետները» (°) ընդամենը 20 հազար դրամ աշխատավարձ են ստանում: Մենք հարկատու ենք և կատարում ենք մեր պարտավորությունները որպես այդպիսիք: Խնդրենք, պետությունն էլ թող մեր վճարած հարկերը արդար կերպով վերաբաշխի և ոչ թե չաք փակի հարկերից խուսափող հաստավիզ և անգրագետ մարդկերպ էակներին, որոնց մի մասը բազմել է ԶԳ Ազգային ժողովում, ամեն վայրկյան հոռուում-բռնաբարում է հայոց լեզուն և սեփական ու ախպեր տղերքի աշխատավարձերը բարձրացնելու անբարոյական օրենքի նախագծեր է մշակում: Երրորդ՝ որքան հիշում են, 1996թ., երբ ստացել են իմ առաջին ԿԳԿ փաստաթուղթը, այն էլ՝ արելանական «ուղղագրության» ճիշտ գրված, ԱՎԿ-ի աշխատակիցների աշխատավարձը, դրանով թե դուրարային համարժեքով, շատ ավելի ցածր է եղել, քան այսօր: Սակայն, ինչպես երևում է, աշխատավարձի բարձրացումը բերել է որակի ոչ թե բարձրացմանը, այլ՝ ահավոր անկմանը, մարդկանց անունը խայտառակելու աստիճանի

5. Անձնանունները, հատկապես ազգանունները, ինչպես

149

նույնիմանքն բառն է հուշում, կրում են պատմական տեղեկություն(ներ) տվյալ անհատի հորական նախնիների մասին: Հետևաբար, ազգանվան որևէ խեղաթյուրում հավասար է պատմության խեղաթյուրման, որի համաշխարհային անգերազանցելի վարպետները թուրքերն են ու նրանց ցեղակիցները մեր երկրի արևելյան կողմում: Պատմության խեղաթյուրումը թուրքական մեթոդ է, իսկ ԱՎՎ-ը, խեղաթյուրելով սփյուռքահայերի ազգանունները, ինքնաբերաբար, ականա խեղաթյուրած է լինում նրանց տոհմի պատմությունը: Իսկ դրա իրավունքը նա ոչ մի դեպքում չունի: Դա աղաղակող անօրինականություն է: Օրինակ, իմ հալեպցի մեկ բարեկամը՝ Մարտիկյան ազգանունով, կատաղել էր իր ԿՀԿ-ում հայտնաբերելով իր ազգանվան խեղաթյուրումը «Մարդիքյան»-ով, ինչ էլ թե իր սիրական անձնագրում լատինատառ գրվել է Martikian: Սիրիացի արաբ պաշտոնյան ուրիշ ի՞նչ կերպ գրեր հայկական այդ ազգանունը, եթե արևմտահայերենում «Մարտիկ»-ը հնչվում է «Mardig» և ոչ թե «Martik», իսկ արաբերենում չկա լատիններենի «g» = արևելահայերենի «q» տառի հնչյունին համապատասխանող տառ: Նույնիսկ եթե լատինատառ գրված լիներ Martikian, ոչ մեկ երաշխիք չկա, որ ԱՎՎ-ի ամենագետները այդ ազգանունը հայերենում կարող են «թարգմանել» Մարթիկյան կամ Մարթիքյան ձևերով: Իմ բարեկամի ազգանունը ծագել է Սասունի 1904 թ. ապստամբությանը մասնակցած և զոհված իր հոր պապի՝ Մարտիրոսի (փաղաքշական ձևով՝ Մարտիկի) անունից: Նա ինձ հարց էր տալիս, թե ի՞նչ իրավունք ունեն անարգելու իր նահատակ նախնու հիշատակը, ինչո՞ւ «Մարտիկ» անունը ՀՀ-ում վերափոխում են «Մարդիք»-ի: Այս հարցումները վերահասցեագրում են ԱՎՎ-ի «գրագետ-մասնագետ-լեզվագետ»-նստիկաններին:

Եվ վերջում ևս մեկ պարզաբանում, որը թեև չի վերաբերում բուն հարցին, սակայն առնչվում է նրան, քանի որ բոլոր հայերը բախվում են այդ խնդրին: Դա ազգանվան «յան»-ը լատինական

«y» թե՞ «i» տառերով գրելուն է վերաբերում: Տիկ. Ջաքարյանը «գյուտ» է արել, հայտնելով թե «y»-ը ամերիկյան անգլերենով է, «i»-ն՝ բրիտանական անգլերենով: Այդպիսի բան չկա: ԱՄՆ-ում ազգանունները, նաև անունները, գրվում են այնպես ինչպես դրա տերն է ցանկանում (մեր չինովկիների համար «գլխավոր էտալուն» համարվող ԱՄՆ-ին նույնիսկ այս հարցում հասնելու համար, շատ հաց ու պանիր դեռ պետք է ուտենք), և մեր հայրենակիցների մեծ մասի, զոհն «դասական» (նախնիները արևմտահայ) ամերիկահայերի համարյա բոլորի ազգանունները ավարտվում են «ian»-ով: Մյուս կողմից, էլի տրամաբանական մի հարց. ո՞րն է մաքուր անգլերենը՝ ամերիկյանը թե բրիտանականը: Իհարկե՝ երկրորդը, քանի որ առաջինը ածանցվել է երկրորդից և որոշ փոփոխություններ կրել ժամանակի ընթացքում: Հետևաբար, որևէ երկրում անգլերենը հիմք ընդունելիս (զոհն պետական մակարդակում), առաջնորդվում են բրիտանական անգլերենով և ոչ թե «ամերիկերենով» ինչպես ՀՀ-ում, ինչքան էլ ամերիկյան համաշխարհայնացումը փորձում է կուլ տալ նաև բրիտանական անգլերենին:

Այս հրապարակումով դիմում ենք ՀՀ նախագահին, վարչապետին, ոստիկանապետին, ՀՀ Սահմանադրական դատարանին, իրավապաշտպան կազմակերպություններին և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ պահանջելով վերականգնել մեր անուն-ազգանունների իսկական գրելաձևը, որը, նորից են շեշտում, տվյալ չափահաս անհատի բացարձակ իրավունքն է, նրա անձնավորության և ինքնության արտահայտման հիմնական ձևերից մեկը:

Վերացրեք «ոստիկանական ուղղագրությունը»: Վերադարձրեք մեզ մեր իսկական անունները, մեր ինքնությունը, մեր էության անբաժան մասը: Սա չենք խնդրում, սա պահանջում ենք: Սա մեր բնական և օրինական իրավունքն է:

Ի հեճուկս «ոստիկանական» Կևրկի՝

Գևորգ ՅԱԶԸՃՅԱՆ

«ՏԱՐԲԵՐ ԴԱԿԱՏԱԳՐԵՐ»

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին (ինչպես ընդունված է ասել՝ Եղեռնի թեմային) նվիրված բազմաթիվ գրքեր տպագրվեցին հատկապես վերջին երեք տասնամյակում: Հայաստանում (ինչպես նաև նրա սահմաններից դուրս) հրատարակված այդ ծով գրականության մեջ իր փոքրիկ, բայց ուրույն տեղն ունի ներկա գիրքը (Մարգիս Քանթարճյան, «Տարբեր ճակատագրեր»), և ահա թե ինչու: Եղեռնի թեման ներկայացնելով մի հայ գերդաստանի շուրջ մեկդարյա պատմությանը (որի շառավիղներից է նաև ինքը), ընդ որում պատմում համեմելով փաստագրական (երբեմն նույնիսկ հայ ընթերցողին անծանոթ) հարուստ նյութով (որից, սակայն, չի տուժում գրքի գեղարվեստական արժեքը), հեղինակը, իմ կարծիքով, ընթերցողին մղում է հետևյալ երկու կարևոր եզրակացության. 1) հայը, հայ մարդը կարող է շարունակվել, կարող է հարատևել միայն իր հայրենիքում (բացահայտելով իր չի՞ կարող աճել Հայաստանում, կամ խաղողը՝ Սիրիոյում), և 2) մենք այդպես էլ, մեծ իմաստով, դասեր չենք կարողա-



նում քաղել մեր անցյալից (հեղինակն այս գաղափարին հանգում է՝ բավականին ուշագրավ զուգահեռականներ անցկացնելով 20-րդ դարասկզբի և վերջին 10-15 տարիներին Հայաստանում տեղի ունեցած

հայտնի անցքերի միջև): Ահա թե ինչու ներկա գիրքը, որը լույս է տեսել ռուսերեն (և բոլոր առումներով արժանի է հրատարակել նաև այլ օտար լեզուներով), առաջին հերթին պետք է հայ ընթերցողի սեղանին դրվի հայերեն լեզվով: Զե՛ որ այսօր նույնպես մեզմիջ շատերը (ինչպես գրքի հերոս Վարդան Բոյաջյանը) շարունակում են «բարօրություն» փնտրել օտար ավերում: Վարդանը չտեսավ (և չէր էլ կարող տեսնել) իր գերդաստանի, այսինքն հենց իր վախճանը: Բայց նրա օրինակը հո կարո՞ղ է ուսանելի լինել մերօրյա վարդանների համար...

Իհարկե, արժեք զոհն մի երկու խոսք ասել գրքի գեղարվեստա-փաստագրական արժեքի, հաջողված կերպարների (այդպիսիք, անշուշտ, կան), կյանող այուժեի (գիրքը, իսկապես, կարդացվում է մեկ շնչով) մասին... Սակայն վախճանադրանք ստվերներն իմ ամենակարևոր ասելիքը. այս գիրքը պետք է հնարավորինս շուտ թարգմանել հայերեն, որի համար գուցե կօտմվի՞՞ որևէ հրատարակիչ կան հովանավոր...

Սամվել ԳԱՍՊՐՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՇԱՎԻՆՈՒՄ

Ֆրանսիայում Հայաստանի տարվա մշակութային տարածումները ի թիվս արվեստի տարբեր ոլորտների, ընդգրկում է նաև բանահյուսական ժանրը: Ֆրանսիայի ունկնդիրը մեծ ուշադրություն է ցուցաբերել հայ ժողովրդական հեքիաթների ունկնդրությանը՝ Շավիլում: Դրանք բանավոր ներկայացրել են Ֆրանսիացիներ Հելեն Մարի-Քրիսթինը, Շանթալը, Սարի-Թերեզը, Կին: Առաջին նախադասությունները հայերեն ընթերցել են Շավիլի «Լևոն Շանթ» դպրոցի աշակերտները՝ Ավետիս և Ազատ Թոփալյան եղբայրները: «Մի կաթիլ մեղրը», «Անա-

հիտ», «Պարտեզի տերը», «Ջուլիակն ու սև շրջանակը», «Թագավորն ու սափիրը», «Ոսկե կարագը», «Գանգրոտ տոտիկներով այծը» հայկական այս հեքիաթների ներկայացումը տևել է 1,5 ժամ, որը մերթ ընդ մերթ ընդմիջվելով դուրսուրս երաժշտությամբ, սրահում ստեղծվել է հաճելի մթնոլորտ: Երեկոն տեղի է ունեցել Շավիլի գրադարանի տնօրեն Կի Պեռոշոցի կազմակերպմամբ:

Սելանհա ԲԱՂԱՅԱՆ

РОДНОЙ ЯЗЫК И ПАТРИОТИЗМ

Сравнительный анализ армянских и европейских первоисточников

На Западе возникновение национализма и патриотизма исследуется, как правило, исключительно на основе исторического опыта Европы периода XVI-XX вв. Естественно, подобный европо-центризм неизбежно приводит к неудовлетворительным результатам и необоснованным выводам. Так, большинство ученых, изучающих феномен национализма-патриотизма, полагают, что первые нации в мире появились в XVI-XIX вв., а «самосознание наций - плод XIX века». Например, Ли Гриффельд, авторитетнейший ученый в этой области, утверждает, что «первая современная идея нации возникла в XVI веке в Англии, а англичане - первая нация в мире».

Подобные суждения западных ученых в какой-то степени можно объяснить тем обстоятельством, что формирование европейских наций и обретение ими национального самосознания действительно приходится на XVI-XIX века. Вот свидетельства самих западных исследователей: «Даже многие годы спустя после Французской революции 1789г. абсолютное большинство проживавших во Франции людей еще не осознавало, что они французы»; или: «В середине XIX века в Италии всего лишь 3% итальянцев умели говорить на том же общем языке. Большая же часть говорила на сильно различающихся провинциальных диалектах и считала себя сицилийцами, римлянами...»

Между тем уже древние и раннесредневековые первоисточники выявляют развитую идентичность армян, сопутствующие ей патриотические настроения и порожденные ими идеологии. И все это - за века до возникновения сходных процессов в Европе.

Армянский язык

Армянский язык - один из решающих, если не самый решающий исторический фактор из числа тех, которые имели воздействие на формирование национального самосознания армян. По сути, армянский язык был наипервичным стимулом возникновения национального самосознания армян. В свою очередь, существование в языковом плане самобытной и консолидированной общины стало необходимой предпосылкой для раннего обособления армянского языка от индоевропейского праязыка.

Многочисленными новыми и новейшими исследованиями отныне окончательно установлена автохтонность армянского языка на Армянском нагорье. Гегемония армянского языка и, соответственно, армян-



кого этноса на Армянском нагорье утвердилось в 4-3 тысячелетиях до н. э., а возможно, и еще раньше. Прямое свидетельство об ареале распространения армянского языка оставил нам греческий географ Страбон (64 г. до н. э. - 23 г. н. э.), согласно которому во II веке до н. э. все население объединенной империей Арташеса I Армении говорило на армянском языке - «все были одноязычны».

Ниже мы приводим сравнительный анализ содержащихся в армянских, английских, французских и русских источниках свидетельств, позволяющих выяснить, когда и в каких социально-исторических обстоятельствах родной язык становится объектом общенациональной любви и гордости.

«Золотой век»

«в восточном краю, вдоль границ армянской речи».

Еще одно сообщение «отца армянской истории» дает возможность представить, как рано цари древнеармянского государства осознали стратегическую важность этнолингвистического единообразия. Ссылаясь

на Мар Абаса Катину, Мовсес Хоренаци сообщает, что царь Арам (в этом эпизоде он воплощает одного из двух армянских царей: жившего в IX веке до н. э. Арамэ или жившего в VII в. до н. э. Эримена-Армани) предписал жителям окраинных гаваров, только вошедших в состав Армении, «научиться армянской речи и языку». Фактически этот эпизод говорит о том, что уже в IX-VII вв. до н. э. государство Армения разработало и строго проводило специальную языковую политику, гарантировавшую развитие армянского языка.

Мовсес Хоренаци - не единственный наш средневековый автор, подчеркивающий значение армянского языка. Сразу же вслед за созданием армянских письмен, в том же V веке, другие армянские мыслители также подчеркивали важность фактора родного языка.

Так, Павстос Бузанд определял Армению как «весь мир армянского языка» и «Торговую страну армянского языка».

Рассказывая о всенародной скорби, охватившей Армению в связи с кончиной Католикоса Нерсеса Великого, Павстос пишет: «И внутри границ Армянской страны, от одного ее края до другого, оплакивали его все благородные и крестьяне, населяющие дом Торгома благородные и крестьяне без исключения, **весь армянский язык**».

В этом эпизоде Павстос считает армянами только говорящих на армянском (причем независимо от сословных и иных различий), Армению определяет как страну, говорящую на армянском языке, а границы Армении соотносит с территорией господства армянского языка. Фактически Павстос отождествляет понятия Армения-армяне-армянский язык. К этому следует добавить, что в старину слово «язык» означало также «народ, земля, с одноплеменным населением своим, с одинаковой речью» (В. Даль, Толковый словарь живого великорусского языка, Том IV, М., 1955, с. 164). Забегая вперед, отметим, что данная Павстосом четкая характеристика Армении - «мир армянского языка» - вошла в употребление в Европе в гораздо более поздний период. В начале XIX века, например, немецкий автор Эрнест Мориц Арндт давал такую же характеристику Германии: *Das ist des Deutschen Vaterland* (дословно - «это Родина немецкого языка»).

Примечательно одно из высказываний Египта об армянском языке. Автор знаменитого сочинения «О Вардане и войне армянской» в своей другой работе «Толкование творения» подчеркивает исключительные возможности армянского языка, сравнивая их с возможностями других современных ему языков:

«После распада единого большого языка красота возникла: язык грека - неж-

ный, римлянина - резкий, гунна - угрожающий, сирийца - молящий, перса - роскошный, алана - цветистый, гота - наемливый, египтянина - словно доносящийся из скрытого и темного места, индуса - стрекочущий, а армянина - вкусный и могущий все языки в себя вобрать.

И как цвет другим (в сравнении с другим) цветом проясняется, и лицо - лицом, и рост - ростом, и искусство - искусством, и дело - делом, так и язык языком красив».

Эти строки демонстрируют, с одной стороны, ту нескрываемую гордость, с какой Егише говорит об армянском языке, считая его наилучшим - вбирающем в себя достоинства всех других языков; с другой стороны, уважительное и даже любовное отношение автора к языковым культурам других народов, хотя в его оценках проскальзывает легкий юмор, в свою очередь, подчеркивающий превосходство армянского. Подобное отношение к другим культурам свидетельствует о «просвещенности» армянского национализма, убежденности армян в том, что собственная цивилизация и культура достаточно сильны, чтобы противостоять чуждым влияниям и безопасно заимствовать у них полезные для себя элементы.



Превосходство армянского языка над другими языками подчеркивали и армянские авторы более позднего времени.

В 1244-1246гг. Вардан Аревелци, называемый также Великим Варданом, в отличие от других вардапетов - его тезок и современников, написал по просьбе царя Киликийской Армении Хетума I «Толкование грамматики». В нем, сравнивая подобно Егише армянский язык с другими языками, Вардан Аревелци приходит к убеждению, что его родной язык - наилучший: «Но ты, народ армянский, исследуй и изучай языки, например, греки, франки (европейцы, говорящие на латинском. - А. А.) и эллины, которые македонцы (sic), много мучаются, пока достигают желаемого и выучиваются правильно говорить и слушать слова, какое из них

мужского рода, женского или нейтрального, какое смешанного.

А мы, армяне, благодаря богатству и роскоши нашего языка и письма, посчитали это ненужным, греки же и другие нации вынуждены были вследствие бедности их языка и письма и тем самым восполнили недостатки (своих языков)».

Конечно, Вардан Аревелци не в одиночку и не самостоятельно пришел к подходам армяноцентристского языкознания, он всего лишь развил вековые традиции армянской национальной идеологии. Об этом свидетельствует следующий факт: в законченной им в 1267-1268гг. «Всеобщей истории» Вардан повторил, лишь слегка видоизменив, слова Егише, посвященные армянскому языку: «... От первого грубого неотесанного языка получили начало языки: мягкий греческий, резкий римский (латинский), грозный гуннский, просящий сирийский, богатый персидский, изящный аланский, смешной готский, глухой египетский, щебечущий индийский и вкусный и роскошный, и приятный армянский. И, как различие цветов производит красоту и разнообразие, точно то же творит и разнообразие языков».

Слегка видоизмененные характеристики Егише, возможно, ставшие широко известными благодаря Вардану Аревелци, можно встретить в трудах таких наших знаменитых мыслителей и грамматиков, как Мхитар Айриванеци (? - около 1305), Ованес Ерзнкаци (около 1250-1326), Григор Татеваци (1346-1409).

Интересное исследование армянского как языка Божественного принадлежит перу известного ученого-мхитариста Микаэла Чамчяна (1738-1823). В первом томе своей «Армянской истории» он пишет: «Тот первый язык, на котором говорили люди, начиная с Адама до разделения языков, был язык армян, который сохранился до сих пор. И это можно легко доказать, ведь до этого разделения люди говорили на том языке, который бытовал в Армении, так как Ной и его сыновья, которые говорили на исконном языке Адама, жили в Армении и там жились...»

Стремясь доказать, что армянский язык - это язык Бога и Адама (т. е. избранный язык), Чамчян так развивает толкование Григором Татеваци слов Егише: «Мы видим, что те, кто в совершенстве владеет армянским языком со всеми его особенностями, звуками и произношением, умеют правильно произносить все те слова других народов, которым учатся, словно это их родной язык. А другие народы не умеют правильно произносить чужие слова, как показывает опыт. Отсюда и следует, что первоначальным и родным диалектом был язык армян, а не других, язык которых произведен от армянского».

Когда же такое отношение к родному языку сформировалось в Европе? Об этом любопытные факты содержит примечательная работа социолога и историка Лии Гринфельд, посвященная формированию

английской, французской, русской, немецкой и американской наций. Гринфельд, в частности, отмечает, что подобное особое отношение к собственным языкам возникает параллельно формированию наций и появлению у них патриотических и националистических настроений.

Английский

Англичане свою преданность и любовь к английскому языку начали высказывать, начиная с XVIв. Они считали его превосходящим все остальные языки.

Ричард Кэрю в своем «Письме о превосходстве английского языка», написанном в конце XVI века, подчеркивает преимущества родного языка и недостатки других. Интересно сопоставить его характеристики с данными Егише.

«Итальянский приятен, но не имеет мышцев, подобен спокойно текущей воде. Французский изящен, однако излишне формален, как женщина, которая боится открыть рот, опасаясь повредить выражение своего лица. Испанский - благороден, однако слишком фальшив, в нем слишком часто используется «О», а также страшен, как сатана в театральном спектакле. Голландский - мужествен, однако очень хриплый, подобный вступающему в спор по любому слову. А мы, заимствуя у них, от итальянцев взяли силу согласных, от французов - целостное звучание слова, от испанцев - разнообразие окончаний, от голландцев - дополнительные смягчающие гласные; так, подобно пчелам, собрали у них все хорошее, а осадок оставили им... И как может язык, обладающий всем этим, не звучать сладко-звучно?»

Французский

Подобное отношение к французскому (который был языком не всей Франции, а Парижа) сформировалось значительно раньше, уже в XIII веке.

Примечательно, что уже тогда на французском, мало распространенном в провинциях самой Франции, говорили и писали европейские элиты и парижский французский объявлялся «самым прекрасным языком в мире». Вот пример такого высказывания: «Сладкий французский - язык самый прекрасный в мире, самый грациозный и благородный, самый распространенный и любимый, так как Бог, во имя своей славы и хвалы, сделал его настолько сладостным и любимым, что его можно сравнить лишь с языком ангелов небесных».

Только с XIV века французский становится объектом страстной любви ученых и поэтов и благодаря им - центральным символом идентичности французов.

Русский

Большая Советская энциклопедия отмечает, что в XVII-XVIIIвв. «единого литературного русского языка не существовало».

Его создание связывают обычно с именем и эпохой А. С. Пушкина. Этому блестящему результату предшествовало более чем вековое усилие русской патриотической интеллигенции и государственных деятелей. Из них, в первую очередь, необходимо упомянуть Михаила Ломоносова, который в 1775г. так писал о своем родном языке: «... язык российский, не токмо обширностию мест, где он господствует, но купно и собственным своим пространством и довольствием велик перед всеми в Европе... Карл Пятый, римский император, говаривал, что испанским языком - с Богом, французским - с друзьями, немецким - с неприятельми, итальянским - с женским полом говорить прилично. Но если бы он российскому языку был искусен, то, конечно, к тому присовокупил бы, что им со всеми оными говорить пристойно, ибо нашел бы в нем великолепие испанского, живость французского, крепость немецкого, нежность итальянского, сверх того, богатство и сильную в изображениях краткость греческого и латинского языка».

(Между прочим, заметим, что приписываемые императору Карлу эти же замеча-

ния без, естественно, упоминания о русском языке, в несколько иных интересных вариациях упоминает и армянский книгопечатник и автор Гукас Ванандеци в справочнике, напечатанном в 1699 году.)

Английские ученые Ганс Роджер и Лиа Гринфельд с единодушным удивлением замечают, что этот гимн русскому языку имеет очевидное сходство с дифирамбом английскому языку, написанным Кэрью. Причем они убеждены, что Ломоносов не мог быть знаком с произведением второстепенного английского автора XVI века и заимствовать у него свою мысль.

Мы со своей стороны добавим, что ни Кэрью, ни Ломоносов никак не могли быть знакомы с подобными суждениями армянских авторов раннего средневековья.

Говорить о превосходстве родного языка Егише и других армянских авторов, Кэрью и Ломоносова побуждали не столько достоинства этих языков, сколько историческая эпоха утверждения или возрождения национального самосознания. Эти армянские и зарубежные авторы просто испытывали на себе тождественное воздействие сходных социально-исторических ситуаций и, независимо от разделяющей их времен-

ной и пространственной отдаленности, они с удивительным единообразием отразили это воздействие.

Обобщим. Национальный язык становится осознанным объектом общенациональной любви и поклонения в такой исторический период, когда этническая группа, достигшая определенного уровня культурного развития, приобретает устойчивые признаки нации, а затем в лице своей интеллектуальной элиты и при поддержке и покровительстве политической элиты, имея целью последующую разработку и систематизацию национального самосознания, начинает тщательно анализировать элементы своей идентичности (в том числе и национальный язык), давая при этом теоретико-идеологические объяснения, обосновывающие их необходимость и полезность.

Армен АЙВАЗЯН.

От ред.: - Статья является краткой версией одноименного исследования А. Айвазяна, вышедшего в свет на армянском языке в 2001г.

ВРЕМЕНА НА СТРАНИЦАХ СЕМЕЙНЫХ АРХИВОВ



Филолог, педагог, журналист Альберт ПАРСАДАНЯН написал необычную книгу под названием «Освященные реликвии». Почему необычную? Об этом чуть позже. Представим прежде автора.

РОДИЛСЯ ОН В 1930 ГОДУ В АЛАВЕРДИ, окончил филологический факультет ЕГУ, работал учителем в Алаверди, в 1965 переехал в Ереван, сотрудничал в редакциях газет «Пионер канч», «Хорурдаин дпроц», «Ездинери дзайн». Родившийся в эпоху коллективизации, Альберт Ишханович пережил войну, послевоенные годы, на его глазах сменяли друг друга «вожди» СССР - от Сталина до Горбачева. Уже 15 лет мы все живем в независимой Армении.

За прошедшие годы Парсаданян по роду своей деятельности встречался с сотнями

людей различных профессий, и в его архиве накопилось множество записей, документов, фотографий. Это, видимо, и подтолкнуло его к реализации интересного замысла - рассказу о прожитом времени с помощью



фотографий, дополненных краткими подтекстовками о времени и людях.

«Освященные реликвии» - сборник материалов о разных людях. В нем нет разделов по хронологическому, профессиональному или иному признаку. Рядом с прославленными Рубеном Мамуляном, Ованесом Ши-

разом, Паруйром Севаком, Серо Ханзаяном, Ованесом Баграмяном и десятками других знаменитостей соседствуют «простые смертные»: учителя, инженеры, солдаты, спортсмены, журналисты... Большинство из них являются соавторами «Реликвий», ибо именно они предоставили Парсаданяну фотографии и документы с запечатленными на них героями нашего времени. И попутно написали о встречах с ними.

О КОМ ТОЛЬКО НЕ УПОМЯНУТО В КНИГЕ!.. Аршил Горки и Максим Горький, Дереник Демирчян и Карен Демирчян, Владимир Жириновский и Любовь Космодемьянская (мать Зои), Сафо и Кэролайн Кокс... Именной указатель в конце книги адресует читателя к нужным страницам, где можно наткнуться на любой сюрприз. Скажем, ознакомьтесь с дарственной надписью маршала А. М. Василевского на книге, подаренной герою Сталинграда Сурену Мирзояну. И попутно узнайте, что невесткой маршала, женой его сына Юрия, была армянка - дочь Ивана Тевосяна, зампредсовмина СССР.

